ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

4

Մարտ, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԼՈԲՈՒՍ
Վերլուծական տեղեկագիր

ГЛОБУС
Аналитический бюллетень

№ 4 (12)
Մարտ, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ 3

Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցումը
էներգետիկ անվտանգության համատեքստում 6

Стратегия национальной безопасности Республики Армения:
процесс принятия и структура документа 10

Հակահայկականության դրսևորումները
վրացական մամուլում 13

Հրանտ Դինքի սպանությունը «ծպտյալ հայերի»
համար հայտնություն էր 16

Конкурентоспособность государства и искусственные
ограничители ее реализации 19

Վահաբական գործոնն Ադրբեջանում 24

Иран, США, Израиль и Сирия: военный баланс
на Ближнем Востоке 28

ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության համակարգի ներկայությունը
Հարավային Կովկասում. հետևություններ և հեռանկար 32

Հայոց առևտրատնտեսական ներկայությունն աշխարհում 39

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ազգային անվտանգություն *(ԱԱ)* հասկացության հենքում դրված է «փոխկապվածության սկզբունքը», համաձայն որի՝ *ԱԱ* համակարգի հուսալիությունը պայմանավորված է նրանով, թե որքանով են հայեցակարգային դրույթներում և դրանց հիման վրա ձևավորված *ԱԱ* համակարգում ներդաշնակորեն ներկայացված պետության ու ազգի կենսագործունեության բոլոր ոլորտների անվտանգության խնդիրները: Այդ առումով պետք է ընդունել, որ վերջերս հաստատված «ՀՀ ԱԱ ռազմավարությունը», ունենալով կարևորագույն նշանակություն, հանդիսանում է ընդամենը առաջին փաստաթուղթը, որին պետք է հաջորդեն այլ մշակումներ, և միայն դրանց ամբողջացման պարագայում հնարավոր կլինի ձևավորել *ԱԱ* համալիր հայեցակարգ:

«Օրենքից դուրս» պատերազմներ. Հայտնի է, որ այսօր առանձնահատուկ հրատապություն են ձեռք բերել *ԱԱ* բաղադրամաս հանդիսացող Տեղեկատվական անվտանգության *(ՏԱ)* խնդիրները[1]: Բավական է նշել, որ համաձայն Գիտնականների համաշխարհային ֆեդերացիայի 2000թ. խորհրդաժողովի եզրակացությունների՝ մարդկության համար գլխավոր վտանգ են համարվում տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները: Նման առաջնահերթությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ներկայումս ընթացող տեղեկատվական պատերազմները, չնայած մի շարք երկրների՝ այդ ոլորտի իրավական խնդիրները ՄԱԿ կամ այլ ատյանների քննարկմանը ներկայացնելու ջանքերին, կարգավորված չեն որևէ միջազգային պայմանագրով: Այսինքն՝ տեղեկատվական գործողությունները, ի տարբերություն ավանդական պատերազմական գործողությունների, միջազգային օրենքների դաշտից դուրս են գտնվում, և որևէ իրավաբանական նորմ կամ պատժամիջոց այդ ոլորտում նախատեսված չէ: Մինչդեռ այսօր տեղեկատվական-հոգեբանական զենքի կիրառումով ընթացող պատերազմների հետևանքները պակաս աղետալի չեն, քան ավանդական պատերազմներինը:

Ստեղծված իրավիճակը խոսում է այն մասին, որ «պատերազմի» և «խաղաղության» վերաբերյալ նախկին պատկերացումներն արդի տեղեկատվական դարաշրջանում էապես փոխվել են. ներկայիս տեղեկատվական պատերազմները շարունակական բնույթ են կրում, և դրանց «խաղաղ կարգավորման» կամ «զինադադարի» մեխանիզմներն առայժմ բացակայում են:

«Տեղեկատվական զենք». Այս ամենի կապակցությամբ հարկ է նշել, որ «տեղեկատվական զենք» հասկացությունը խիստ ընդգրկուն է դարձել: Այն չի ենթադրում միայն հատուկ քարոզչական եղանակներ կամ սակավ հայտնի «նեյրոլինգվիստիկական ծրագրավորում», որի կիրառումը երբեմն թույլ է տալիս ներշնչող բովանդակություն ունեցող էլեկտրոնային նամակների միջոցով ֆիզիկապես վերացնել անցանկալի անձանց:

Այսօր բուռն զարգացում են ապրում տեղեկատվական-հոգեբանական զենքի այսպես կոչված տեխնիկական (ռադիոէլեկտրոնային, համակարգչային, քիմիական, կենսաբանական) տարատեսակները: Դրանցից մի քանիսին, օրինակ՝ «համակարգչային վիրուսներին», ծանոթ են շատերը: Հանրությանը հայտնի է նաև էլեկտրոնային և համակարգչային համակարգերի վրա ազդող ֆիզիկական մեթոդների մի մասը: Սակայն այսօր իրականություն են դառնում նախկինում միայն գիտաֆանտաստիկ երկերում արծարծվող գերբարձր հաճախականություն ունեցող ճառագայթների միջոցով մարդկային զանգվածների ղեկավարումը և զոմբիացումը, ինչպես նաև մարդու հոգեկանի և ֆիզիկականի վրա ազդող շատ այլ, առաջին հայացքից անհավանական թվացող տեխնոլոգիաներ:

---

[1] Համաձայն համաշխարհային պրակտիկայում ընդունված դասակարգման՝ *ԱԱ* համալիր դոկտրինի բաղադրամասերն են հանդիսանում ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և տեղեկատվական անվտանգության հայեցակարգերը, որոնք շաղկապված են միմյանց հետ և որոնք, իրենց հերթին, ունեն բազմաթիվ ճյուղավորումներ:

Տեղեկատվական դարաշրջանի քաղաքականություն կամ «նոոքաղաքականություն». Տեղեկատվական անվտանգության խնդիրներն առանձնահատուկ կերպով կարևորվում են տնտեսապես զարգացած երկրներում՝ ԱՄՆ-ում, ԵՄ երկրներում և հատկապես Չինաստանում, ուր տեղեկատվական-հոգեբանական ոլորտի քաղաքական-ռազմական կարևորումն ավելի քան երկու հազարամյակի պատմություն ունի:

Նման ուշադրությունը պայմանավորված է ոչ միայն արդեն սովորական դարձած տեղեկատվական ռեսուրսների անվտանգության պահպանման անհրաժեշտությամբ, այլև սկզբունքային բնույթի այլ նկատառումներով: Ըստ ամերիկյան ժամանակակից մոտեցումների՝ հրատապ է դարձել ներքին և արտաքին քաղաքականության հիմնադրույթների վերանայումը, քանի որ գլոբալացվող աշխարհում մրցունակ լինելը և հաջողության հասնելն առաջին հերթին պայմանավորված են տեղեկատվական ռեսուրսների ձևավորման ռազմավարությունն իրագործելու կարողությամբ ու այդ ռեսուրսները գործնական հարթությունում կառավարելու և կիրառելու հմտությամբ:

Մասնավորապես, համաձայն ամերիկյան կառավարության հովանու տակ գործող հանրահայտ *ՌԵՆԴ* կորպորացիայի մասնագետների կողմից մշակված հայեցակարգի՝ «կիբեռտարածություն» (համակարգչային համակարգերի միջոցով ստեղծված վիրտուալ տարածություն) և «տեղեկատվական դաշտ կամ ոլորտ» (որը ձևավորվում է հիմնականում ԶԼՄ-ի միջոցով) հասկացությունները պետք է միավորել որպես մեկ այլ, ավելի լայն հասկացության մաս, որը կոչվում է «նոոսֆերա» (այս եզրն առաջին անգամ կիրառել է ֆրանսիացի Դե Շարդենը, իսկ հասկացությունը հետագայում զարգացրել է ռուս գիտնական Վերնադսկին): *ՌԵՆԴ-ի* փորձագետները գտնում են, որ համաշխարհային «նոոսֆերայի» ձևավորումը տեղեկատվական դարաշրջանի մարդկությանը թելադրում է քաղաքականությունում կիրառել նոր ռազմավարություններ, որոնց համախումբը ստացել է «նոոքաղաքականություն» անվանումը:

Մասնավորապես, նոոքաղաքականությունը ենթադրում է, որ քաղաքական պլանավորման ամենաբարձր մակարդակներում պետք է ձևավորվեն նոր տիպի հիմնադրույթներ, որոնք հենված են գաղափարների, արժեքային համակարգի, բարոյական և էթիկական նորմերի, այլ ոչ թե ավանդական «ուժի քաղաքականության» վրա: Եթե նախկինում քաղաքականության հիմնաքարը պետությունը և ազգային շահն էին, ապա նոոքաղաքականությունում կարևորում են «պետությունների ցանցերը», պետական և հասարակական կազմակերպությունները և դրանց շահերը:

Նոոքաղաքականությունն այսօր լայնորեն կիրառվում է արևմտյան քաղաքականությունում: Այդ առումով բնորոշ է Լոս Անջելեսում 2006թ. Անգլիայի վարչապետ Թոնի Բլերի ծրագրային ելույթը, որտեղ նա հայտարարեց. «Մենք վարում ենք Հակաահաբեկչական պատերազմը նրա համար, թե ինչպես պետք է կառավարվի աշխարհը 21-րդ դարում... և մենք չենք հաղթի գլոբալ ծայրահեղականության դեմ ճակատամարտում, եթե չշահենք այն արժեքային համակարգի հարթությունում»:

Հետևություններ. Հայությունը և Հայաստանը (այսինքն՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն), չլինելով մեծաթիվ ազգ և խոշոր աշխարհաքաղաքական միավոր, ի տարբերություն մի շարք այլ ոչ մեծ երկրների և ազգերի, այսօր ներքաշված են գլոբալ գործընթացների մեջ: Բավական է նշել ԼՂՀ հակամարտության կարգավորման և Ցեղասպանության հետ կապված խնդիրները, որոնք ժամանակակից միջազգային քաղաքականության բաղադրամասն են: Սա վկայում է այն մասին, որ տեղեկատվական ոլորտում վերոնշյալ զարգացումներն անմիջականորեն առնչվում են Հայաստանի և հայության հետ ու թելադրում են ՀՀ քաղաքական ղեկավարությանը ժամանակակից իրողություններին համահունչ ռազմավարություն իրագործել:

Մինչդեռ, չծանրանալով առանձին փաստերի վրա, պետք է ընդունել, որ մեր տեղեկատվական ոլորտում տիրող իրադրությունը դեռևս հեռու է բարվոք լինելուց: Արձագանքման կարիք ունեցող տեղեկատվական սպառնալիքները պայմանականորեն (քանի որ դրանք շաղկապված են) կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Սպառնալիքներ՝ ուղղված պետական և ոչ պետական տեղեկատվական տեխնիկական համակարգերի դեմ՝ կապ, համակարգչային ցանցեր, ռադիոէլեկտրոնային միջոցներ և այլն (տեղեկատվական անվտանգության տեխնիկական ոլորտ)։
- Սպառնալիքներ՝ ուղղված Հայաստանի վարկանիշի և կերպարի (իմիջի) դեմ միջազգային, դիվանագիտական, հասարակական ատյաններում և ընդհանրապես գլոբալ տեղեկատվական դաշտում (նոոքաղաքականության ոլորտ)։
- Սպառնալիքներ՝ ուղղված մարդկային գործոնի (անհատի, հանրության, իսկ մեր պարագայում՝ նաև հայության) դեմ (հոգևոր-հոգեբանական անվտանգության և նոոքաղաքականության ոլորտ)։

Վերոնշյալ խնդիրների (որոնց ցանկը կարելի է ընդլայնել) լուծման համար պահանջվում է կիրառել որոշակի հետազոտական-գործնական մեթոդաբանություն։ Անհրաժեշտ է, մասնավորապես, ուսումնասիրել.

- Հայաստանի պետական և ոչ պետական գերատեսչությունների ու կառույցների առկա տեղեկատվական հիմնախնդիրները և այդուհետ դրանք դասակարգել ըստ ոլորտների և հրատապության աստիճանի։
- *ՏՄ* բնագավառում եղած միջազգային փորձը (նոոքաղաքականության և տեխնիկական ոլորտներում) և այն համադրել հայաստանյան իրողությունների հետ։
- ՀՀ և ԼՂՀ տեղեկատվական ոլորտի իրավաբանական դաշտը *ՏՄ* ազգային համակարգի ներդրման տեսանկյունից։

Նման հետազոտություններից ստացված արդյունքները թույլ կտան ՀՀ իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ քայլեր տեղեկատվական ոլորտի հրատապ խնդիրների լուծման ուղղությամբ և ձեռնամուխ լինել *ՏՄ* հայեցակարգի մշակման, իսկ այդուհետ՝ նաև *ՏՄ* համակարգի ներդրման աշխատանքներին։

Գագիկ Հարությունյան

ՄԵՂՐԻՈՒՄ ՆԱՎԹԱՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայաստանի և Ռուսաստանի նախագահների հանդիպման արդյունքների մասին նախագահների համատեղ մամլո ասուլիսում հնչեց տեղեկատվություն այն մասին, որ ռուսական «Գազպրոմի» նավթային մասնաճյուղը քննարկում է Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման հարցը: Գործարանի աշխատանքների համար հումք պետք է հանդիսանա իրանական նավթը, որը ՀՀ տարածք հասցնելու համար Իրան-Հայաստան նավթամուղ պետք է կառուցվի: Վերամշակված նավթը, ըստ եղած սուղ տեղեկատվության, պետք է արտահանվի Իրան-Հայաստան-Իրան երկաթգծով, որը նույնպես ենթադրվում է կառուցել մոտակա տարիների ընթացքում:

Թե՛ նավթավերամշակման գործարանի հեռանկարային կառուցման մասին հայտարարությունը, թե՛ Հայաստանի և Իրանի երկաթուղիների միացման նախագիծը հայաստանյան և ռուսաստանյան լրատվամիջոցներում մեկնաբանվեցին հիմնականում երկու իրարամերժ տեսակետներով.

1. ***Նախագծերը լուրջ են և իրատեսական.*** հարցին այսպես անդրադարձան հիմնականում հայաստանյան և ռուսաստանյան պետական լրատվամիջոցները:
2. ***Նախագծերն անիրագործելի են և մտացածին.*** հարցին այս տեսանկյունից փորձեցին մոտենալ հիմնականում հայաստանյան ընդիմադիր լրատվամիջոցները:

Միևնույն ժամանակ, տարածաշրջանային տնտեսական և քաղաքական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը ստիպում է ավելի լուրջ մոտենալ նավթավերամշակման գործարանի հիմնախնդրին՝ այն դիտարկելով որպես Հայաստանի, Ռուսաստանի, Իրանի և Հարավային Կովկասի զարգացումներում ընդգրկված տերությունների համար կարևորագույն նշանակություն ունեցող հարց: Մանավանդ որ գործարանի և երկաթգծի նախագծերը այնքան էլ նոր չեն, որքան կարելի է կարծել:

Նախապատմություն. Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման մասին առաջին բանակցությունները սկսվել են 60-ականներին: 1967թ. խորհրդա-իրանական առևտրատնտեսական համագործակցության հարցերով հանձնաժողովի նիստի արդյունքում որոշվել է «նպատակահարմար համարել Աստարայում և Մեղրիում նավթավերամշակման գործարանների կառուցման մասին բանակցությունների շարունակումը», ինչը վկայում է բարձրաստիճան հանձնաժողովում տվյալ հարցի քննարկման մասին: Տվյալ պատմական շրջանում նավթավերամշակման գործարանի կառուցման հիմնախնդիրը երկուստեք կարևոր էր թե՛ Իրանի, թե՛ ԽՍՀՄ-ի համար: Մոսկվան փորձում էր տնտեսապես ավելի սերտորեն համագործակցել Իրանի հետ՝ նվազեցնելով շահական Իրանի բացարձակ կախվածությունն Արևմուտքից և արևմտյան տեխնոլոգիաներից: Թեհրանն, իր հերթին, հետաքրքրված էր ԽՍՀՄ-ի հետ տնտեսական հարաբերությունների զարգացմամբ, ինչը, նախ՝ հնարավորություն կտար Իրանին ստանալ խորհրդային առաջատար արդյունաբերական տեխնոլոգիաներ, քանզի ԱՄՆ-ը բավական պասիվ էր աջակցում Իրանին նավթի վերամշակման նախագծերում՝ հետաքրքրված լինելով հում նավթի արտահանման մեջ: Երկրորդ՝ քաղաքական առումով մասնակիորեն կփոխհատուցվեին ԽՍՀՄ տարածաշրջանային կորուստները՝ կապված իրանա-ամերիկյան լայնածավալ ռազմաքաղաքական համագործակցության հետ:

Այս շրջանում, սակայն, թե՛ Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման նախագիծը, թե՛ խորհրդա-իրանական այլ նախագծեր հիմնականում չիրականացան, քանզի արդեն 70-ականների սկզբին իրանա-ամերիկյան դաշինքը և Իրանի կախվածությունը ԱՄՆ-

ից հասան այն մակարդակին, որ Թեհրանը խափանեց Մոսկվայի հետ երկկողմանի նախագծերի մեծ մասի իրագործումը:

Ժամանակակից փուլ. Կասկածից դուրս է, որ Հայաստանի և տարածաշրջանային անվտանգության համար, այդ թվում նաև էներգետիկ, բավական կարևոր է Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման նախագծի վերակենդանացման հարցը: Կարևոր է գոնե այն տեսակետից, որ նախագիծը, ինչպես և 40 տարի առաջ, կարող է հանդիսանալ որպես Հայաստանի կարևոր գործընկերներ Ռուսաստանի և Իրանի համատեղ տնտեսաքաղաքական ծրագիր, որի իրագործման նպատակահարմարությունը ներկա փուլում որոշակիորեն բխում է Թեհրանի և Մոսկվայի ոչ այնքան նախանձելի տարածաշրջանային դիրքերից:

Ռուսաստանի համար նավթային ձեռնարկությունների արտասահմանյան ներդրումների պետական խրախուսումը բավական նոր երևույթ է, ինչը պայմանավորված է հիմնականում երկու կարևոր հանգամանքներով. առաջին՝ մինչև *ՅՈՒԿՕՍ-ի* գործը և *ՍԻԲՆԵՖՏ-ի* գնումը պետական վերահսկողությամբ խոշոր նավթային ընկերություններ չկային, երկրորդ՝ «էներգետիկ գերտերության» կարգավիճակը ստիպում է Ռուսաստանին ավելի ակտիվ քաղաքականություն վարել հետխորհրդային տարածաշրջանում: Իսկ այստեղ Ռուսաստանի համար ձևավորվել է բավական հետաքրքիր իրավիճակ. Մոսկվան հետխորհրդային տարածքի համար հիմնական գազային գործոն է հանդիսանում, սակայն որպես նավթային գործոն իր տեղը զիջում է արևմտյան ընկերություններին: Որպես օրինակ կարելի է բերել հետևյալ փաստը. Ռուսաստանի հետխորհրդային տարածաշրջանում նավթային ներդրումները ծավալով զիջում են անգլո-ամերիկյան *«Բրիթիշ Փեթրոլիում»* ընկերության ներդրումներին: Տվյալ պարագայում անհնար է խոսել Ռուսաստանի «էներգետիկ գերտերության» կարգավիճակի մասին, չնայած նրան, որ ՌԴ-ն տարածաշրջանի հիմնական գազամատակարարն է, ինչպես նաև հիմնական գազ արտահանողը տարածաշրջանից: Այնպես որ, Ռուսաստանի ակտիվացումը հետխորհրդային նավթային շուկայում օբյեկտիվ անհրաժեշտություն է ՌԴ-ի՝ «էներգետիկ գերտերության» վերածվելու գործընթացում: Սակայն այստեղ ևս կան որոշակի հիմնախնդիրներ Ռուսաստանի համար, որոնցից հիմնականը կարելի է համարել հետևյալը. հետխորհրդային նավթային ակտիվների մեծ մասն արդեն իսկ գտնվում է արևմտյան ընկերությունների վերահսկողության տակ, իսկ Բաքու-Ջեյհան և Ղազախստան-Չինաստան նավթատարներն արդեն իսկ զրկել են Ռուսաստանին նավթի նավթատարային արտահանման մենաշնորհից: Ինչպիսին կլինի ռուսական նավթային կապիտալի մուտքը ԱՊՀ. սա կարևորագույն հարց է Ռուսաստանի համար:

Այս հարցի պատասխաններից մեկը պետք է համարել հենց Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման նախագիծը, որը բնորոշվում է հետևյալ հանգամանքներով.

- Գործարանը կառուցվելու է արևմտյան նավթային ընկերություններից ազատ գոտում:
- Գործարանն օգտագործելու է արտատարածաշրջանային հումք, որի ներկրումն իրագործվելու է հավանաբար ռուսական ներդրումներով կառուցվող նավթատարի միջոցով:
- Նավթի արտահանման համար կառուցվելիք երկաթգիծը, ինչպես նաև ռուսական *ՐԺԴ-ի* կողմից հայկական երկաթգծի կոնցեսիոն կառավարման ձեռքբերումը Մոսկվան դարձնելու են Հարավային Կովկաս-Մերձավոր Արևելք հաղորդակցային կապերի ակտիվ գործոն:

Վերը նշվածը հարցի միայն տնտեսական կարևորությանն էր վերաբերվում: Քաղաքական տեսանկյունից Ռուսաստանի տնտեսական և էներգետիկ ինովացիոն ներգրավումը Հայաստան բավական կարևոր է, քանզի Վրաստանի մասնակի հաջողությունները եվրահինտեգրման ճանապարհին և հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման մասին վերջին շրջանում ակտիվացած քննարկումները կարող են ազդել Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքորոշման վրա: ***Տվյալ պարագայում սա այնքան էլ կարևոր չէ. Հայաստանի համար ավելի կարևոր է տեղեկատվական դաշտում նման գաղափարի տարածումը, քանի որ այն կբերի թե՛ Ռուսաս-***

տանի տնտեսական ակտիվացմանը Հայաստանում, թե՛ ամերիկյան ճնշումների ուժեղացմանը Թուրքիայի վրա՝ Հայաստանի հետ սահմանի բացման նպատակով:

Իրանի համար Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման տնտեսական նպատակահարմարությունը կապված է իսլամական հանրապետության նավթավերամշակման ընդհանուր հիմնախնդրի հետ: Նավթավերամշակման հիմնական հզորություններն Իրանում ստեղծվել են 35-50 տարի առաջ և նպատակ են ունեցել ապահովել Իրանի վերամշակված նավթի պահանջները: Պարզ է, որ վերջին տասնամյակների ընթացքում Իրանի նավթավերամշակման գործարանները մաշվել են թե՛ ֆիզիկապես և թե՛ բարոյապես: Արևմտյան ուղղակի էներգետիկ ներդրումների բացակայության պայմաններում ժամանակակից նոր գործարանների կառուցումն Իրանի տարածքում բարդ է, իրանցիներն իրենք չունեն սեփական մշակման ժամանակակից վերամշակման տեխնոլոգիաներ և հզորություններ, իսկ վերամշակված նավթի պահանջն Իրանում աճում է, ինչը պայմանավորված է ոչ միայն երկրի տնտեսական զարգացմամբ, այլև նրանով, որ իսլամական հանրապետության բնակչությունն ավելի քան կրկնապատկվել է 40 կամ 50 տարի առաջվա համեմատ, երբ ստեղծվել էին վերամշակման գործարանները: Այսօր Իրանը հում նավթ արտահանող և վերամշակված նավթ ու բենզին ներկրող պետություն է: Այս իրավիճակի դեմ Իրանի ղեկավարությունը նպատակ է դրել պայքարել մոտակա տարիների ընթացքում: Սակայն Իրանում առկա իրավիճակն օբյեկտիվ բնույթ է կրում և պայմանավորված է, ինչպես նշեցինք, վերամշակման հզորությունների և նոր տեխնոլոգիաների բացակայությամբ: Այդ հզորությունների ստեղծումը սեփական ուժերով Իրանում գրեթե անհնար է, իսկ արտասահմանյան ներդրումներ այս ոլորտում չեն արվում, քանի որ.

Ա. արևմտյան ներդրողների համար երկրում գայթակղիչ տնտեսական պայմաններ չեն ստեղծված, իսկ միջազգային ասպարեզում առկա է հակազդեցություն ամերիկյան քաղաքական ներդրումներին իրանական նավթավերամշակման և ընդհանրապես նավթային ոլորտում,

Բ. ամերիկյան վերահսկողությունից և ԱՄՆ-ից ուղղակի կախվածություն չունեցող միակ պետությունը՝ Չինաստանը (որը տիրապետում է անհրաժեշտ ֆինանսական միջոցների Իրանում վերամշակման գործարանների ցանց կառուցելու համար), պարզապես շահագրգռված չէ դրանց ստեղծմամբ, քանի որ հետաքրքրված է Իրանից հում նավթ ստանալով, որի ծավալները կարող են կրճատվել, եթե իսլամական հանրապետությունը սեփական տարածքում զարգացնի նավթի վերամշակման ոլորտը:

Այս համատեքստում Իրանի համար բավական շահավետ պետք է երևա Հայաստանի տարածքում նավթավերամշակման գործարանի կառուցումը, որը, ըստ ամենայնի, հանդիսանալու է ռուս-իրանական համատեղ նախագիծ և իրագործվելու է ռուսական՝ բնույթով արևմտյան, ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Չնայած վերամշակման գործարանը գտնվելու է Իրանի տարածքից դուրս, նրա աշխարհագրական դիրքը և ռուս-իրանական համատեղ ներդրումային բնույթը նվազեցնելու են հնարավոր տնտեսական և քաղաքական կորուստներն Իրանի համար: Իր հերթին, Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը մեկ ընդհանուր գծով կմիավորի Իրանի երկաթուղին Հայաստանի երկաթուղու հետ, ինչը (եթե Մեղրին էլ միանա մեկ գծով Հայաստանի ընդհանուր երկաթուղային ցանցին՝ շրջանցելով Նախիջևանը) հնարավորություն կտա իսլամական հանրապետությանն ավելի ապահով և ձեռնտու ելք ապահովել Վրաստանի սևծովյան նավահանգիստներ:

Քաղաքական առումով նավթավերամշակման գործարանն ավելի կամրապնդի հայ-իրանական կապերը: Սակայն Իրանի և Ռուսաստանի համար նավթավերամշակման գործարանի կառուցումը Մեղրում կարող է ունենալ նաև մի շատ կարևոր տնտեսաքաղաքական հետևանք:

Չնայած Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին ընթացող բանակցություններում Մեղրու շրջանի հարցը չի քննարկվում, այնուամենայնիվ, այս տարածքի հնարավոր հանձնումն Ադրբեջանին դեռ երկար ժամանակ անհանգստացնող հեռանկար է հանդիսանալու և՛ Իրանի, և՛ Ռուսաստանի համար: Անգամ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հնարավոր

իրավական կարգավորումը չի վերացնի ռուսական և իրանական կողմերի մտահոգությունը Մեղրու հիմնախնդրի շուրջ: Որպես սպառնալիք Իրանի և Ռուսաստանի համար կարող է համարվել տարածքի հետագա հայաթափումը՝ կապված տնտեսական և սոցիալական բարդ իրավիճակի հետ: Մեղրու շրջանի տնտեսական հետընթացը և սոցիալական բարդ իրավիճակը խնդրահարույց կդարձնեն այս տարածքի միջյուրքական աշխարհագրական դիրքի կարևորությունը Ռուսաստանի և Իրանի համար և ռազմավարական տեսակետից կսպառնան այս երկու պետությունների շահերին: ***Այստեղ ևս, ինչպես և հայ-թուրքական սահմանի վերաբացման հետևանքների դեպքում, կարևոր է այն հնարավոր տեղեկատվական գործընթացը, որը պետք է սկսի հայկական կողմը. Մեղրու բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակը և ռազմավարական նշանակությունը կարող են բավական հաջող օգտագործվել տեղեկատվական դաշտում՝ Մեղրիում տնտեսական նոր և ժամանակակից նախագծեր իրականացնելու քարոզչության համար: Սա կարող է Թեհրանին և Մոսկվային անուղղակիորեն հուշել կամ էլ ստիպել հասկանալ, որ Հայաստանի հարավում նավթավերամշակման գործարանի և այլ ժամանակակից հզորությունների ստեղծումը զուտ տնտեսական նախագիծ չի հանդիսանում:***

Որոշ եզրակացություններ. Հաշվի առնելով վերը նշված իրողությունները՝ կարելի է գալ որոշակի եզրակացությունների.

1. Նավթավերամշակման գործարանի կառուցումը Հայաստանի հարավում ունի իրագործվելու օբյեկտիվ նախապայմաններ և համապատասխանում է ՀՀ էներգետիկ և ազգային շահերին:
2. Հայկական կողմի համար բավական կարևոր է կազմակերպել լավ մշակված տեղեկատվական գործընթաց՝ նախագիծը և դրա աշխարհաքաղաքական կարևորությունը քարոզելու համար:
3. Դա, իր հերթին, Ռուսաստանին և Իրանին կարող է մղել ավելի ակտիվ և շահագրգիռ մասնակցություն ունենալ նախագծի իրագործման մեջ:
4. Վերջինն էլ, իր հերթին, կարող է հարուցել ԱՄՆ քաղաքականության էլ ավելի ակտիվացումը թուրք-հայկական հարաբերությունների կտրվածքով՝ ուղղված հայ-թուրքական սահմանի վերաբացմանը:

Սնակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

СТРАТЕГИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПРОЦЕСС ПРИНЯТИЯ И СТРУКТУРА ДОКУМЕНТА

7 февраля 2007г. Президентом Р.Кочаряном был подписан Указ № ՆՀ-37-Ն об утверждении первой в истории Республики Армения Стратегии национальной безопасности РА. Тем самым логически завершился сложный и длительный процесс подготовки и принятия важнейшего концептуального документа в сфере национальной безопасности, не имеющего аналогов в истории армянской государственности. Беспрецедентность подготовки и принятия Стратегии национальной безопасности выражалась как степенью вовлечения и согласования интересов различных государственных ведомств и учреждений, учета профессионального мнения отдельных экспертов, так и методикой данного процесса, совмещающей глубокую внутригосударственную разработку документа с широкой общественной апробацией и учетом основных внешнеполитических партнеров страны за ее пределами (России, США, НАТО). Все это свидетельствовало о методологической новизне и широкой общественной прозрачности процесса подготовки и утверждения Стратегии в Армении, что в целом значительно отличается от практики, применявшейся при принятии аналогичных документов в остальных постсоветских странах.

Напомним, что указом Президента Р.Кочаряна была создана Межведомственная комиссия по разработке Стратегии национальной безопасности во главе с секретарем Совета национальной безопасности при Президенте РА, министром обороны С.Саркисяном. Заместителем руководителя Межведомственной комиссии был утвержден советник президента РА по национальной безопасности Г.Исагулян, а секретарем Комиссии – советник министра обороны, директор Института национальных стратегических исследований имени Д.Канаяна Министерства обороны генерал-майор А.Котанджян. Наряду с остальными государственными структурами, в разработке документа особенно активно участвовали профильные ведомства в данной сфере – МИД и Министерство обороны, а также две важнейшие научно-исследовательские организации страны в области стратегических исследований и политического анализа: Институт национальных стратегических исследований МО и Институт политических исследований при администрации Президента РА.

После того, как проект документа был утвержден на заключительном заседании Межведомственной комиссии, в самом конце 2006г. он был представлен Президенту страны. В результате работы экспертов администрации Президента РА, в частности, Института политических исследований при администрации, в проект были внесены значительные поправки и дополнения. Поправки, в частности, касались общей структуры документа, перспектив урегулирования карабахского конфликта и взаимоотношений с Нагорно-Карабахской Республикой (выделенных в отдельную главу), а также некоторых аспектов внешней и внутренней безопасности РА. После внесения согласованных с Президентом дополнений и изменений в текст документа экспертами администрации и Института политических исследований, окончательный проект Стратегии 26 января 2007г. был одобрен на заседании Совета национальной безопасности РА и уже 7 февраля 2007г. окончательно утвержден президентским Указом.

С одной стороны, утверждение Стратегии Указом Президента Республики Армения объяснялось политической и практической целесообразностью, т.к. данный подход к принятию и утверждению концептуального документа в сфере безопасности весьма распространен во многих государствах мира[1]. С другой стороны, приоритетность эффективного и сбалансированного разделения властей, внутренние конституционные нормы и сама специфика сферы обес-

[1] См. подробнее: *Минасян С.* Мировой опыт принятия концепции национальной безопасности // 21-й Век, №2 (4), Ереван, 2006.

печения национальной безопасности также вызвали необходимость утверждения Стратегии именно указом Президента РА[1].

Стратегия национальной безопасности Республики Армения характеризуется логической стройностью текста и широкой тематикой освещения проблем национальной безопасности страны. Структурно документ состоит из Введения, где дается общее представление о понятии стратегии национальной безопасности, четырех глав и Заключительных положений. Как отмечается во Введении, «Стратегия национальной безопасности Республики Армения представляет систему обеспечения стабильного развития и безопасности государства, общества и личности, государственной политики сохранения армянской самобытности». Вместе с тем, Стратегия подлежит уточнениям по мере реализации целей этого документа, а также изменению политической обстановки и угроз и вызовов национальной безопасности РА.

Первая глава документа называется «Основополагающие ценности национальной безопасности Республики Армения, факторы и действия реализации безопасности, направленные против них угрозы». Согласно Стратегии, основополагающими ценностями национальной безопасности РА являются: независимость, защищенность государства и народа, мир и международное сотрудничество, сохранение армянства и благосостояние ее народа. В главе также анализируются и указываются основные факторы и действия по реализации национальной безопасности, а также показывается весь спектр внешних и внутренних угроз и вызовов национальной безопасности Армении на нынешнем этапе.

Вторая глава посвящена внутренней безопасности РА. Основной упор в ней сделан на вопросах, относящихся к реализации и осуществлению политики в сфере эффективного государственного управления, военного строительства, либеральной экономики, а также достижения нового качества жизни и соответствующей морально-психологической атмосферы в Армении. Как отмечается в тексте, важнейшей составляющей обеспечения внутренней безопасности РА является проведение всеобъемлющих и масштабных реформ, а их затягивание или провал рассматриваются в качестве «непосредственной угрозы национальной безопасности».

Третья глава документа целиком посвящена Нагорно-Карабахской Республике и имеет стержневое значение в структуре Стратегии национальной безопасности Республики Армения – «как гаранта безопасности народонаселения Нагорно-Карабахской Республики (Арцаха)». Глава освещает основные подходы и взгляды руководства Армении на перспективы урегулирования нагорно-карабахского конфликта. Основываясь на том, что «правовые основания провозглашения Нагорно-Карабахской Республики неуязвимы», документ фиксирует следующий четкий подход военно-политического руководства Армении к дальнейшему урегулированию проблемы: «Постоянно исходя из принципа, что любое окончательное соглашение или окончательный документ должны получить одобрение карабахской стороны, Армения считает приемлемыми только те варианты урегулирования, которые будут направлены на закрепление необ-

---

[1] Юридическая сила Стратегии национальной безопасности Республики Армения в качестве официального государственного акта, принимаемого Указом Президента РА, основывается на нормативной силе Указа и ведет к соответствующей юридической обязательности по соблюдению и исполнению его положений. Вместе с тем, Стратегия национальной безопасности не может рассматриваться с сугубо юридических позиций своей силы, а выступает в качестве политико-юридического документа. Политическая составляющая выражается в том, что положения Стратегии являются политической основой для разработки и принятия законов и иных нормативно-правовых актов Республики Армения в сфере обеспечения национальной безопасности государства. Юридическая составляющая заключается в том, что все органы государственной власти и управления, должностные лица и государственные служащие Республики Армения в своей деятельности, непосредственно касающейся или каким-либо образом затрагивающей сферу обеспечения национальной безопасности Республики Армения, обязаны руководствоваться положениями Стратегии.
Вместе с тем, как известно, Указы Президента РА в иерархии нормативно-правовых актов государства занимают промежуточное место между Законами РА, принимаемыми Национальным Собранием РА, и постановлениями Правительства РА. Для принятия Стратегии национальной безопасности РА в порядке, предусмотренном для принятия Закона РА (т.е. принятия его со стороны Национального Собрания РА), отсутствуют необходимые конституционно-правовые основания. В статье 83.5 Конституции РА, определяющей исключительную законодательную регламентацию конкретного перечня сфер общественных отношений, отсутствуют положения, которые бы указывали на относимость принятия Стратегии национальной безопасности к данному перечню и, следовательно, Национальное Собрание не может являться органом, которой должен был утвердить указанный документ. Тем самым, конституционные нормы Республики Армении с очевидностью указывают на приоритетную роль Президента на всех этапах процедуры принятия и утверждения Стратегии национальной безопасности страны.

ратимой реальности фактического существования Нагорно-Карабахской Республики». В главе подчеркивается важность фактора безопасности и наличия географической связи Армении и НКР, а также отмечается, что основной задачей вооруженных сил является «неприкосновенность границ Республики Армения, а также обеспечение физической безопасности населения Армении и Нагорно-Карабахской Республики».

Важнейшее значение имеет четвертая глава документа – «Стратегия внешней безопасности». Основываясь и руководствуясь двумя важнейшими принципами – «комплементаризмом» и «вовлеченностью», обеспечение своей внешней безопасности Республики Армения осуществляется в трех важнейших измерениях: международном, региональном и общеармянском. Первое измерение предусматривает широкое сотрудничество страны с международными организациями военно-политического характера (НАТО и ОДКБ), членство и вовлеченность Армении в деятельность универсальных и европейских международных организаций (ООН, Совет Европы, ОБСЕ), сотрудничество на постсоветском пространстве (СНГ). Двусторонний формат обеспечения внешней безопасности Армении в международном измерении предусматривает активное сотрудничество страны с Российской Федерацией, Соединенными Штатами Америки, европейскими странами, государствами Ближнего Востока и Азиатско-Тихоокеанского Региона.

Региональной измерение предусматривает добрососедское сотрудничество с ее соседями в регионе – Ираном, Грузией, а также показывает взгляды руководства Армении на перспективы налаживание взаимоотношений с Турцией и Азербайджаном. Исходя из целей и задач документа, региональная стратегия обеспечения национальной безопасности Республики Армения нацелена на «формирование атмосферы регионального сотрудничества, создание системы безопасности, стремясь к установлению конструктивных отношений между соседними государствами».

Общеармянское измерение внешней безопасности РА предусматривает дальнейшее укрепление интеграции между Арменией и Диаспорой, которые должны быть направлены «как на противодействие ассимиляции и потере Диаспорой своей языковой и культурной идентичности, так и на обеспечение скоординированного участия Диаспоры в решении проблем, имеющих жизненное значение для Армении и Нагорно-Карабахской Республики».

Заключительные положения Стратегии национальной безопасности РА предусматривают ее роль и значение как основного концептуального документа в формировании общей политики Армении в сфере обороны, внешней и внутренней безопасности страны, эффективного государственного управления. Указывается общий порядок пересмотра ее положений в случае изменения «политической обстановки и приоритетов». В то же время видна политическая императивность данного документа в различных отраслевых сферах его применения для должностных и официальных лиц и соответствующих структур государственного управления: «В выступлениях от имени Республики Армения, а также в заявлениях государственных должностных лиц сохранение духа приводимых в стратегии национальной безопасности формулировок и позиций обязательно. С целью осуществления единой политики правительством и органами государственного управления Республики Армения принимаемые решения должны быть созвучны положениям стратегии национальной безопасности».

Представляется, что принятая 7 февраля 2007г. Стратегия национальной безопасности Армении является целостным и эффективным документом, имеющим долгосрочное значение для общей государственной политики в сфере безопасности, в том числе по защите фундаментальных ценностей, реализации национальных интересов и безопасному развитию страны, а так же фиксации приоритетов по противодействию угрозам и вызовам национальной безопасности РА.

Сергей Минасян

ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Հայ-վրացական ներկա միջէթնիկ հարաբերություններում որոշակի անվստահության աճը լուրջ անհանգստություն է առաջացնում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում: Անզեն աչքով էլ արդեն նկատելի է անբարյացակամ (երբեմն՝ անթաքույց թշնամական) վերաբերմունքը Վրաստանի քաղաքացի էթնիկ հայերի նկատմամբ, ինչը չի կարող անտարբեր թողնել ՀՀ քաղաքական ընտրանուն և հասարակական ակտիվ շրջանակներին:

Կարելի է անվերջ խոսել տարածաշրջանի երկու քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի ու վրացիների դարավոր բարեկամության մասին՝ հղելով հատկապես 11-12-րդ դդ. հայ-վրացական զինակցության փայլուն օրինակներին: Ցավոք, այսօրվա զարգացումներն այլ տրամաբանություն ունեն և միայն պատմական անցյալով չէ, որ պայմանավորված են:

Վրացալեզու մամուլում հաճախ ենք հանդիպում հակահայ հրապարակումներ: Անշուշտ, համոզված չենք, որ դրանց հետևում կանգնած չեն որոշակի շահագրգռված ուժեր թե՛ Վրաստանի ներսում, թե՛ դրսում: Աշխարհաքաղաքական շահերի պրիզմայով դիտարկելիս հայ-վրացական հարաբերությունների բարելավումը ձեռնտու է միայն հայերին ու վրացիներին: Միևնույն ժամանակ, թերևս, տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս չենք գտնի մեկ այլ կարևոր «խաղացողի», որին նույնպես ձեռնտու է հայ-վրացական հարաբերությունների բարելավումը:

Այսպիսով, հայ-վրացական հարաբերություններում առկա կնճիռների հարթումը մնում է միայն երկու հարևան ժողովուրդների խնդիրը:

Նախ՝ հայերի շրջանում, որոնց մեջ արմատացած է հայ-վրացական դարավոր բարեկամության կարծրատիպը, տարակուսանք է հարուցում այն, թե ինչու է Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգում այսօրվա անկախ Հայաստանը դիտվում որպես «պրագմատիկ համագործակից», իսկ Ադրբեջանը՝ «ռազմավարական դաշնակից»:

Ցավոք, արդի փուլում արտաքին կողմնորոշումներում և արտաքին քաղաքական դաշնակիցների ընտրության հարցում Հայաստանն ու Վրաստանը հայտնվել են քաղաքական, տնտեսական տարբեր խմբավորումներում: Այս ամենին զումարվում և օրի օրի բացահայտվում են որոշ խնդիրներ, որոնք առկա են միջէթնիկ ընկալումներում և միջէթնիկ կամ միջհամայնական հարաբերություններում:

Մի կողմից՝ վրացական ազգայնական ընտրանու շրջանակներում վիրահայությունն ընկալվում է որպես հնարավոր մրցակից Վրաստանում և հատկապես մայրաքաղաք Թբիլիսիում իշխանության հաստատման հարցում: Հայկական տարրը դիտվում է որպես ներքաղաքական կարևոր գործոն, որը հավակնություններ ունի Թիֆլիսի նկատմամբ, քանի որ վրացիները բազմաթիվ անգամներ լսել են, թե ինչպես են թիֆլիսահայերն ասում, որ Թիֆլիսն իրենք են կառուցել, և որ այն հայկական քաղաք է: Այս հանգամանքը որոշակի ազդեցություն է գործում վրացական ընտրանու և հասարակ ժողովրդի հոգեբանության ու վարքաբանության վրա՝ առաջացնելով որոշակի անվստահություն հայերի նկատմամբ:

Հայկական կողմը բավական հաճախ է շեշտադրում «Հայկական Թիֆլիս» բառակապակցությունը, ինչն ավելորդ խանդի և ջղաձգության առիթի է վերածվում: Անգամ «Թիֆլիս» կամ «Թբիլիսի» բառի կիրառման ընտրությունը նույնպես կարող է հակասությունների ու բախումների առիթ դառնալ:

Մյուս կողմից՝ վիրահայերի շրջանում գործում է կոլեկտիվ հիշողությունը 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին Թիֆլիսում իրենց սոցիալ-տնտեսական և քաղաքական գերակայության մասին:

Վրացական ներկա իշխանությունների ազգայնական կեցվածքը էթնիկ փոքրամասնություններին հուզող հարցերում էլ ավելի է ակտիվացնում վիրահայության այս կոլեկտիվ հիշողությունը, որը, թերևս, այդ ազգայնական քաղաքականության ուղղակի արդյունքն է:

Վրացական մամուլի հակահայ հռետորականությունն ունի պատմական արմատներ և ավանդույթներ: Դեռևս 19-րդ դ. վերջին–20-րդ դ. սկզբին ուշագրավ գործելաոճ ունեին Թիֆլիսում հրատարակվող և բացահայտ հակահայկական ուղղվածություն ունեցող մի շարք վրացալեզու թերթեր: Դրանցից են «Ցնոբիս Փուրցելին» (Տեղեկությունների թերթիկ), «Ախալի Դրոեբան» (Նոր ժամանակներ), «Սախալխո Գազեթին» (Ժողովրդական թերթ), «Իվերիան», «Կավկազը», որոնք իրենց էջերում խոր հակակրանք էին արտահայտում հայերի հանդեպ՝ նրանց մեղադրելով վրացիների տնտեսական անկման մեջ:

Այսօր այս ավանդույթները ոչ միայն շարունակվում են, այլև դրանց նոր լիցքեր են հաղորդվում: Վերջին շրջանում վրացական ազգայնական մամուլը (հիշատակության արժանի են հատկապես «Ռեզոնանսի», «Ասավալ-Դասավալի», «Ցիսկարի», «Խվալինդելի դղե», «Ախալի Թառբա», «Ջորջիան Թայմս» և այլ թերթեր[1]) շարունակական հակահայկականություն է սերմանում վրաց ընթերցողների շրջանում:

Հետաքրքիրն այն է, որ 100 տարվա կտրվածքով մամուլում հնչած շեշտադրումները գրեթե չեն փոխվել: Հայերին մեղադրում են Վրաստանի և վրացիների ողջ պատմության ընթացքում կրած գրեթե բոլոր տառապանքների ու զրկանքների մեջ: Զուգահեռ տարվում է քարոզչություն հայի կերպարը վարկաբեկելու ուղղությամբ: Եթե անցյալում հայերին ներկայացնում էին որպես «գիշատիչ», «վաճառական», վաշխառու», «զավթող», «խորամանկ», ապա այսօրվա հրապարակախոսական մամուլը հարստացել է «ագրեսոր», «խորամանկ» ու «հաջողակ», անգամ «հարբեցող» պիտակավորումներով:

Իհարկե, կարելի է նաև որոշ տարբերություններ նկատել դրանցում: Այսպես, եթե առաջներում հայերը հարուստ և իշխող խավի ներկայացուցիչներ էին կամ «Թիֆլիսի տերերը», ապա հիմա հայը ներկայացվում է որպես առավելապես ցածր սոցիալական շերտ զբաղեցնող ազգ՝ վարսահարդարներ, կոշկակարներ, վարորդներ, մանր վաճառականներ և այլն: Բայց ժամանակակից Թիֆլիսում հայերի սոցիալ-տնտեսական դիրքերի թուլացումն ամենևին էլ չի խանգարում վրաց ազգայնականներին շարունակաբար քարկոծել և որպես մրցակից դիտել նրանց:

Մի քանի մեջբերում կատարենք վրացական մամուլից և տեսնենք, թե որոնք են հայերի «մեղքերը»:

Նախ նշվում է, որ վաղուց արդեն հասունացել է հայ-վրացական բարեկամության մասին «կեղծ» թեզի վերանայման անհրաժեշտությունը, որ «ժամանակն է վերափոխել կարծրատիպն այն մասին, թե իբր հայերն ու վրացիները եղբայրական ժողովուրդներ են, որ Հայոսն ու Քարթլոսը եղբայրներ են, իսկ Հայաստանն ու Վրաստանը՝ բարեկամ երկրներ»: Հերթը հասել է նրան, որ կոչ է արվում վրաց-աբխազական պատերազմն ընկալել որպես հայ-վրացական պատերազմ: Այդ մասին պարզ նշված է մի հոդվածում, որն այդպես էլ վերնագրված է՝ «Աբխազական պատերազմը հայ-վրացական էր» («Ցիսկարի», ապրիլի 5, 2006, թիվ 24, հեղինակ՝ աստղաֆիզիկոս Մալխազ Գվելուկաշվիլի):

Մեկ այլ հոդվածում վրաց ընթերցողներին տեղեկացնում են, որ մենք՝ հայերս, վրացիներին անվանում ենք «գռուզին», ինչը մեզ մոտ ասոցացվում է ռուսերեն «գռուզ» կամ «գռուզչիկ» (բեռնակիր) բառերի հետ («Ասավալ-Դասավալի», մայիսի 12, 2006, հեղինակ՝ Առնո Խիդիրբեգիշվիլի): Հարկ է նշել, որ նման ընկալումը գոնե մեզ՝ հայերիս համար նորություն է:

Վրացական որոշ թերթերում իշխող հակահայ հիստերիային նոր լիցք հաղորդեց 6 հայկական եկեղեցիների խնդիրը, որոնք հայկական կողմը պահանջում է վերադարձնել իրեն: Մի կողմ թողնելով այդ դիսկուրսը (թեպետ հայկական կողմը փաստարկում է այս պահանջը միանգամայն գիտական հիմնավորումներով՝ խորանի բարձրությամբ, մկրտության արարողության համար եկեղեցում հատկացված տեղի ընտրությամբ և այլն), նշենք, որ այս օրինական պահանջները վրացական հակահայկական մամուլը քննարկում է «հայկական պահանջատիրության» համատեքստում: Օրինակ, նշվում է, որ հայերը պահանջում են Թիֆլիսն ու

[1] Վրացալեզու որոշ հրատարակությունների թարգմանությունները վերցված են http://www.armenia.ge/ կայքից:

ամբողջ Վրաստանը, ստեղծել են «Մեծ Հայաստանի» քարտեզ, որ պնդում են, թե Շոթա Ռուսթավելին հայ է, որ Մեսրոպ Մաշտոցն է ստեղծել վրացական այբուբենը և այլն։

2006թ. աշնանը Թիֆլիսի հայաշատ թաղամասում՝ Հավլաբարում բացվեց մի խանութ, որը կրում է «Արարատ» անվանումը։ Ամբողջ աշխարհում կան բազմաթիվ խանութներ, սրճարաններ, ռեստորաններ, կրպակներ և առևտրի ու սպասարկման կետեր պատմական Հայաստանի տեղանուններով, բայց ոչ մի երկրում նման ջղաձգություն դրանք չեն առաջացնում, որքան Վրաստանում։ Այս խանութը բացվելուն պես (որը միակն է Թիֆլիսում, որ կրում է հայերին կամ Հայաստանը հիշեցնող ցուցանակ) նորից հակահայկական հոդված է հայտնվում վրացալեզու մամուլում, որտեղ հեղինակը հիշեցնում է «Արարատ, հուպ-տուր» խորհրդային ժամանակներից հայտնի ֆուտբոլային կարգախոսը և նշում, թե այն հայերի զավթողական բնավորության վառ արտահայտությունն է։ Այնուհետև հեղինակը հռետորական հարց է տալիս, թե ինչու է «Արարատ» ցուցանակ հայտնվել Թբիլիսիի Հավլաբար թաղամասում. արդյո՞ք սա նույնպես հայերի տարածքային նկրտումների հերթական դրսևորումը չէ, և ինչո՞ւ է այդ ցուցանակը ռուսերեն (իրականում ցուցանակը ռուսերեն չէ, այն եռալեզու է՝ վրացերեն, հայերեն, անգլերեն)։

1897թ. Թիֆլիսում հրատարակվող «Իվերիա» թերթը հայերին նվիրված մի հոդվածում գրում է. «Ի՞նչ առումով է Թիֆլիսը հայկական քաղաք. աշխարհագրական դիրքո՞վ, տարածքային օրենքո՞վ, թե՞ այլ պետական կամ միջազգային իրավունքով։ Որտե՞ղ են հայերը կամ Հայաստանը, իսկ որտե՞ղ Թիֆլիսը։ Որտեղի՞ց մինչև ո՞ւր են հասնում նրանց ձեռքերը։ Արդյո՞ք իրենց են պատկանում գնված տները, թե՞ ոչ. դա դեռ կպարզվի։ Բայց Թիֆլիսը գտնվում է Վրաստանի տարածքում… Այստեղ հայը չի համարձակվի ձայն հանել… այստեղ հայերին ոչինչ չի պատկանում» *(“Иверия” об армянах в Тифлисе. Перевод с груз. редакцией “Кавказа”, Кавказ, Тифлис, 1897, No 86):*

Կարծես թե նույն հեղինակի խոսքերն են հնչում մեր օրերում. «Այդ ինքնակոչները (իմա՝ հայերը) ապացուցում են, թե Վրաստանի կեսը հայկական է… Թող որ չմոռանան հայերը, որ իրենց Հայրենիքը մի մեծ փակուղի է։ Իրենք թշնամական հարաբերություններ ունեն Ադրբեջանի ու Թուրքիայի հետ, իսկ տնտեսապես կախված են Վրաստանից… Մենք՝ վրացիներս, չենք մոռացել, որ Աբխազիայում մեր եղբայրների, քույրերի, հայրերի, բարեկամների գլուխներով ֆուտբոլ էին խաղում նաև հայ գրոհայինները» (Գայոզ Մամալաձե, «Ջորջիան Թայմս», թիվ 29, հուլիսի 25, 2006)։

Ցավոք, հակահայկական քարոզչություն տարվում է ոչ միայն վրացական մամուլում, այլև եկեղեցիներում։ Կան տեղեկություններ, որ Վրաց ուղղափառ եկեղեցու հոգևորականներն իրենց հավատացյալներին քարոզում են, թե իբր հայերը քրիստոնյաներ չեն, այլ «սատանայականներ», նաև, որ վրացիներն են առաջինն ընդունել քրիստոնեությունը, ոչ թե հայերը։

Վերջում ավելացնենք Երուսաղեմի համալսարանի «Ռուսական նախագծի» ակադեմիական ղեկավար, դոկտոր Դան Շապիրայի խոսքերը. «Վրաց-քրիստոնյաները միշտ հայերի կողմից վտանգ են զգացել։ Հրեաներն ավանդաբար որպես վտանգ կամ խնդիր չեն ընկալվել։ Հրեաների ավանդական տեղը Վրաստանում զբաղեցրել են հայերը»։

Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ

ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ» ՀԱՄԱՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ԷՐ

Թուրքական «Ակսիոն» հանդեսը սույն թվականի հունվարի 29-ին տպագրել է հարցազրույց Թուրքիայի Ինոնյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեի հետ, որը հայտնի է Թուրքիայի հայերի մասին կատարած իր ուսումնասիրություններով: Հարցազրույցում Ջյոհջեն անդրադառնում է Հրանտ Դինքի սպանությանը և ներկայիս Թուրքիայում ապրող «ծպտյալ հայերի» խնդիրներին: Ստորև թարգմանաբար և որոշ կրճատումներով ներկայացնում ենք հիշյալ հարցազրույցը:

– Հնարավո՞ր է, որ մարդիկ, որոնք Թուրքիայում հայտնի են որպես «ծպտյալ հայեր», Դինքի հուղարկավորության արարողությունն օգտագործած լինեն որոշ նպատակների համար:

– Ես կարծում եմ, որ հանրահավաքում ներկաներից շատերը «ծպտյալ հայեր» էին[1]: Մյուս կողմից, իհարկե, այդ բռնարարքը դատապարտող անկեղծ մարդիկ էլ կային: Այս սպանությունն արդարացման եզրեր չունի, քանի որ տեղի է ունեցել ոչ մարդկային արարք: Իմ կարծիքով, իրենց մինչ այս պահը թաքցրած և Ահմեթ, Մեհմեթ անուններով հայերը հուղարկավորության ժամանակ գիտակցաբար բացահայտվեցին: «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ ենք» արտահայտությունը դրա վկայությունն էր: Ըստ իս, Հրանտ Դինքի սպանությունը «ծպտյալ հայերի» հիմնովին բացահայտվելու համար մի հայտնություն եղավ:

– Այս գործընթացն ավելի վաղ չէ՞ր սկսվել:

– Ավելի վաղ էր սկսվել: Դատարաններին մի շարք հայցեր են հղել: Մալաթիայում 122 քաղաքացիներ նահանգապետարանին դիմելով՝ պահանջել էին վերաբացել եկեղեցին: Թուրքիայում բացահայտ հայեր կան, և նրանք իրենց ուզածի պես ապրում են. նրանց նպատակները և ցանկությունները հայտնի են: Սակայն այս ծպտյալների ծրագրերը հայտնի չեն և միշտ վատ նպատակներ են հետապնդում: Այստեղ ուշադրության արժանի զարգացումներն անցյալում իսլամը նախընտրած հայերի վերաբերյալ տարվող աշխատանքներն են, որոնք միգուցե առաջիկայում կարող են լուրջ արդյունք տալ: Ինչքան որ ես կարողացել եմ արձանագրել, ոչ միայն Մալաթիայում, այլև Էլյազիգում, Ադըյամանում, Գազիանթեփում, Դիարբեքիրում և Էրզրումում այս ուղղությամբ տենդագին ջանքեր են գործադրվում: Բացի այդ, նախկինում այս նահանգներում գրանցված և որոշ ժամանակ այլ քաղաքներ՝ հիմնականում Ստամբուլ գաղթած անձինք կրկին ձգտում են վերագրանցվել իրենց նախկին նահանգներում կամ էլ գավառներում: Սրանք չեն կարող լինել հենց այնպես, պատահական ի հայտ եկած ձգտումներ:

– Իսկ ի՞նչ են ցանկանում անել:

– Ակնհայտ է այստեղ հայկական գործող գաղութ վերաձևավորելու և մնացյալ բոլոր հայերի՝ հիմնականում սփյուռքահայերի, այս տարածքների հանդեպ ունեցած հետաքրքրությունը վառ պահելու ցանկությունը: Սրանք եթե դեմոկրատական միջավայրում նորմալ համարվեն էլ, չի կարելի ասել, թե այս գործընթացը լավ նպատակի է միտված:

– Ուրիշ զարգացումներ էլ կա՞ն, որոնք արձանագրել եք, թե՞ այսքանով են սահմանափակվում:

– Ասում են, որ վերջին ժամանակներս որոշ անձինք տարբեր պատրվակներով հետաքրքրվում են անցյալում հայ կոմիտեականների դեմ պայքարած, հատկապես Մալաթիայի և

[1] Իր մեկ այլ հարցազրույցում պրոֆեսոր Ջյոհջեն նշում է, որ «կրիպտո քրիստոնյաները» կամ «գաղտնի հայերը» նրանք են, ովքեր արտաքուստ իրենց ցույց տալով իբրև մուսուլմաններ՝ իրականում թաքուն շարունակում են քրիստոնյա-լուսավորչական ավանդույթները: (Ծանոթագրությունները և մեկնաբանությունները՝ թարգմանչի):

Մարաշի շրջակայքում ապրող ընտանիքներով, աշխատում ճշտել սրանց սերունդներին: Եթե սա ճիշտ է, ուրեմն՝ դժվար չէ ենթադրել, որ նմանատիպ ուսումնասիրություններ են իրականացվում նաև Էրզինջանի (Երզնկա), Էրզրումի, Կարսի, Վանի, Դիարբեքիրի, Մարդինի և Էլյազիգի շրջաններում:

– Իսկ ինչի՞ համար է նման ուսումնասիրություն կատարվում:

– Ամենայն հավանականությամբ ոչ այն բանի համար, որ ասեն «կեցցես» կամ էլ «մեդալ տան»: Ձեզ կարող է «ցնորք» թվալ, սակայն ես կարծում եմ, որ այս ամենը հաշվարկված է ու հետապնդում է վրեժ լուծելու և ի վերջո հայկական մի պետություն ստեղծելու ցանկություն[2]:

– Դուք խոսում եք «ծպտյալ հայերի» և ապագային միտված նրանց գործունեության մասին: Թուրքիայում այս պայմաններում, ծպտված ապրող ինչքա՞ն հայ կա:

– Հատկապես աքսորի և տեղահանման ժամանակ հայ հպատակների մի մասը մուսուլմանություն է ընդունել: Սրանց որոշ մասն ավելի ուշ նախկին կրոնին է վերադարձել: Սակայն այսօր նրանց բոլորին, թեկուզ նույն ծագումն էլ ունենան, հայ համարելը կամ էլ որպես «ծպտյալ հայ» ընդունելը ճիշտ չէ: Քանի որ նրանց շրջանում կան մարդիկ, ովքեր հայկականության հետ արդեն ոչ մի կապ չունեն, դարձել են իսլամ մեծամասնության մի հատված, և նույնիսկ նրանց մեջ հանդիպում են նաև բավական կրոնասեր մարդիկ: Սակայն փաստ է նաև, որ վերջին ժամանակներս նրանց վերաբերյալ շարունակական աշխատանքներ են տարվում: Հայտնի է, որ որոշ ընտանիքների անհատույց օգնում են, նրանց երեխաներին ուղարկում արտասահման, հիմնականում ԱՄՆ և Կանադա, գործի տեր դարձնում: Այս վիճակը բնորոշ է գրեթե ամբողջ արևելյան և հարավարևելյան Անատոլիայի քաղաքների համար, սակայն ավելի տարածված է Դիարբեքիրի, Ադըյամանի և Մարդինի նահանգներում:

– «Ծպտյալ հայերի» քանակի մասին հնարավո՞ր է գնահատական տալ:

– Բնակչության թվաքանակի մոտավոր գնահատականը չի կարող հստակ ներկայացնել իրական պատկերը: Սակայն նմանատիպ մարդկանց թիվը, կարծում եմ, ամբողջ Թուրքիայի մասշտաբով մոտ 80-100 հազար է: Օրինակ՝ հայտնի է, որ Մալաթիայում կան ծպտյալների մոտ 3500 ընտանիքներ, այսինքն՝ 10-12 հազար հայ բնակչություն:

– «Դուք ծագումով հայ եք» ասելով՝ 100 հազար մարդկանց իրենց արմատներին վերադարձնելը ինչի՞ կհանգեցնի:

– Ոմանք ցանկություն ունեն ստեղծել կղզյակներ, սակայն նրանք դեռ չունեն այնքան բնակչություն, որ կարողանան այս նպատակն իրագործել ավելի ընդարձակ տարածքում, և ներկայումս դա հնարավոր է անել միայն փոքր տարածքներում, այսինքն՝ մի քանի քաղաքում և նրանց ենթակա գյուղաքաղաքներում: 1980-ականներին քննարկվում էր Վանի շրջանում 250 հազարանոց բնակչությամբ մի քաղաք հիմնադրել, որտեղ պետք է ապրեին թոշակառուներ *(ըստ ամենայնի՝ «ծպտյալ հայեր» –Ռ.Մ.):* Եթե նման միտք առկա է, ապա դա մեկ բացատրություն ունի, այն է՝ «Մեծ Հայաստանի» համար ամուր հիմքեր ստեղծել: Կարող եմ թվարկել այն հայտնի պետությունների անունները, որոնք, ինչպես և անցյալում, այս հարցում ևս կարող են շահագործել հայերին. դրանք են ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսաստանը: Չնայած պարզվում է, որ վերջին երեսուն-քառասուն տարում Շվեդիայի, Նորվեգիայի նման պետություններն էլ են հետաքրքրվում Թուրքիայի արևելքով, սակայն

---

[2] Թուրքական «Աքթուել» հանդեսում Ջյոհջեն առաջ է քաշում նաև այն միտքը, որ ապագայում այս «ծպտյալ հայերը» կօգտագործվեն հայերի երազանքներն իրականացնելու համար: Իսկ այն հարցին ի պատասխան, թե իր կարծիքով «գաղտնի հայերը» արդյոք կարող են սպառնալիք ստեղծել, նա պատասխանում է. *«Յավոք սրտի՝ այո: Հատկապես վերջին տարիներին հայկական խմբերի կողմից աշխատանքներ են տարվում՝ աշխատում են հիշեցնել նրանց ինքնությունը, գումարով օգնում: Ես կարծում եմ, որ ինչպես ԱՍԱԼԱ-ից հետո ծագեց ՔԲԿ-ի (Քրդական բանվորական կուսակցություն) խնդիրը, այնպես էլ ՔԲԿ-ից հետո այս մարդիկ Թուրքիայում կօգտագործվեն «քաղաքային տեռորի» նպատակով* (նկատի ունի միատարր բնակչությամբ քաղաքների հիմնումը *–Ռ.Մ.): Այսպիսի զարգացում հնարավոր է մինչև 2010 թվականը ի հայտ գա: Ես հավատում եմ, որ այս մարդկանց՝ իրենց հայկական ինքնությունը գիտակցաբար հիշեցնելու արդյունքում վաղը նրանք Թուրքիայի առաջ հողային և փոխհատուցման պահանջներով են հանդես գալու»:*

անհրաժեշտ չէ սրանց շատ մեծ ուշադրություն դարձնել: Կա նաև եկեղեցու գործոնը: Հայերին շահագործելով՝ եկեղեցիներն իրենց համար հետևորդներ են հավաքում, իսկ իրենց պետությունների համար էլ՝ համախոհներ: Հայերի ստեղծած հիմնադրամներն էլ չպետք է անտեսել: Օրինակ՝ հայտնի է, որ ԱՍԱԼԱ-ին երկար ժամանակ ֆինանսավորել և ուղղորդել է Գյուլբենկյան հիմնադրամը, որի կենտրոնը գտնվում է Լիսաբոնում:

– Հայերի հավակնած տարածքների նկատմամբ էթնիկ-ազգայնական քրդերն էլ պահանջներ ունեն: Ուրիշ խմբեր էլ այս հողերի վրա աչք ունեն: Այս պարագայում պետությունը ի՞նչ պետք է անի:

– Պետք է շատ մեծ բծախնդրությամբ հետևել ժողովրդագրական կառուցվածքի փոփոխություններին և հնարավորություն չտալ այնպիսի զարգացումների, որոնք առաջիկայում կարող են բացասական հետևանքների հնարավոր հիմք հանդիսանալ: Ժողովրդավարության սահմանների մեջ մնալով՝ հանգիստ կարելի է սրան ուղղված միջոցներ ձեռնարկել: Իսկ շատ ավելի կարևոր խնդիր է լավ տիրապետել շրջանի ազգային-կրոնական վիճակին և շարունակաբար հետևել այս ասպարեզում կատարվող փոփոխություններին: Ցավոք, դեռ չունենք կառույցներ, որոնք կկարողանան կատարել այս աշխատանքները: Մի պահ առաջ պետք է ստեղծվեն տեղեկատվության աղբյուրներ և լրջորեն աշխատանքներ ծավալվեն:

Թուրքերենից թարգմանեց
Ռուբեն Մելքոնյանը

Հ.Գ. Հարկ ենք համարում նշել, որ Թուրքիայի «ծպտյալ» և մուսուլման հայերի ու նրանց սերունդների հարցերով ակտիվորեն զբաղվել է նաև Հրանտ Դինքը: Ըստ Դինքի, իր խմբագրած «Ակոս» շաբաթաթերթը նպաստել է, որ «կորած հայերը» գտնեն իրար: Ինչպես նշել է Դինքը՝ *«Պատահում է օրական 5-6 նամակ ենք ստանում: Մարդիկ գտնում են միմյանց: Հայերը ամեն տեղից սկսում են զգացնել տալ իրենց գոյության մասին, և շատ ուրախ ենք, որ «Ակոս»-ը այս հարցում կարևոր մի միջոց է»:* Դինքը, երևի թե իր ամենավերջին հարցազրույցներից մեկում, տպագրված ԱՄՆ-ի հայկական «Օրակարգ» թերթի 2007 թվականի հունվարի 10-ի համարում, նշում է. *«Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան, որ քաջութիւնը ունին հրապարակաւ արտայայտուելու, գիրքեր ու յօդուածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ եւ ես ըսեմ, որ ապագայ հայ կեանքի ամենամեծ եւ ամենայուսալի աշխատանքներէն մէկը կրնայ դառնալ անիկա, քանի որ Թուրքիան որքան ժողովրդավարականանայ, մարդիկ իրենց ինքնութիւնը արտայայտելու այնքան աւելի քաջութիւն պիտի ունենան: Սա նախադասութիւնով կրնամ իմ հայեացքս դրսեւորել եւ ըսել, որ՝ եթէ Թուրքիան եւրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեմ սխալիր, եթե հայութիւնը առնուազն երկու միլիոն եւս շատնայ, Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւով: Ինծի համար շատ կարեւոր է այս հարցով աշխատիլ եւ գտնել այդ կորսուածները, ողջնցնել այդ մեռածները, որ քրիստոնէական պատգամ է: Շատ կարեւոր է գտնել այդպիսի հայ մը եւ իրեն տալ իր հայութիւնը...»:*

Ռ.Մ.

КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ ГОСУДАРСТВА И ИСКУССТВЕННЫЕ ОГРАНИЧИТЕЛИ ЕЕ РЕАЛИЗАЦИИ (на примере Южного Кавказа)

В последнее время в политическом лексиконе государственных деятелей различных стран стало весьма частым акцентирование так называемой «конкурентоспособности государств». Ее используют в различных интерпретациях и упоминают по разным политико-экономическим поводам. С нашей точки зрения, теория международных отношений, помимо разработок экономической теории (прим этом учитывая существующую методологию расчета экономической конкурентоспособности государств)[1], должна выработать общие подходы к определению понятия «конкурентоспособность государства» с присущих для всякой науки концептуально-теоретических позиций, которые бы, в свою очередь, соответствовали современной практике межгосударственных отношений.

Попробуем предложить некоторые формулировки для определения понятия «конкурентоспособность государства» с политологических позиций, и затем, на примере политико-экономического среза межгосударственных взаимоотношений в регионе Южного Кавказа, обозначим складывающиеся в данном регионе неблагоприятные последствия, касающиеся ограничений в реализации «конкурентоспособности государств».

В нашем понимании формулировки, способствующие раскрытию некоторых существенных сторон понятия «конкурентоспособность государства» в сфере международных отношений, можно представить следующим образом:

1. Конкурентоспособность государства – это способность государства инициировать, самостоятельно реализовывать и вовлекаться на взаимовыгодных началах в совместные проекты межгосударственного характера с возможным участием в них негосударственных субъектов (транснациональных корпораций и банков, авторитетных международных общественных организаций). Данная способность оценивается, исходя из общих, объективных, прозрачных критериев, устанавливаемых, в свою очередь, на принципах равного подхода и всестороннего анализа;
2. Одной из важнейших сторон реальной конкурентоспособности государства выступает его способность выступать для своих партнеров надежным субъектом реализуемых проектов.

Сама терминология – «конкурентоспособность государства» – предполагает в качестве исходного экономический понятийно-категориальный аппарат, присущий странам с рыночными механизмами определения экономического предложения и спроса и эффективного удовлетворения последнего. Так, в экономической теории «конкурентоспособность продукции» определяется как «способность продукции (конкретного вида) быть проданной на определенном рынке в условиях превышения предложения над спросом»[2].

Государственное осмысление категории «конкурентоспособность», таким образом, кроме прочего, указывает на элемент более выгодного положения какого-либо конкретного государ-

---

[1] См. Приложение 1

[2] Экономико-математический энциклопедический словарь (гл. ред. *Данилов-Данильян В.И*), М., 2003, с. 221.

«Конкурентоспособность – это сложная экономическая категория, которая может рассматриваться на нескольких уровнях: товара, товаропроизводителя (или фирмы), отрасли, регионов и стран. Между всеми этими уровнями конкурентоспособности существует тесная внутренняя и внешняя зависимость. Синтетическим показателем, который объединяет конкурентоспособность товара, товаропроизводителя, отраслевую конкурентоспособность и характеризует положение страны на мировом рынке, является показатель конкурентоспособности стран. В самом общем виде страновую конкурентоспособность можно определить как способность страны в условиях свободной конкуренции производить товары и услуги, удовлетворяющие требованиям мирового рынка, реализация которых увеличивает благосостояние страны и отдельных ее граждан» (*Каплиев А.С.*, Цели, задачи и функции инновационной политики, http://www.stra.teg.ru/lenta/innovation/1885/print).

ства для участия в каких-либо проектах или программах по сравнению с «конкурирующими» государствами при прочих равных «стартовых» условиях. Другими словами, если ты – государство, которое может обеспечить лучшие условия осуществления экономических проектов, то «рынок» должен «выбрать» тебя, а не «государство-конкурента».

Очевидно, что межгосударственный характер «конкурентоспособности» имеет свою специфику, требующую адекватного осмысления и применения соответствующих критериев ее оценки. Указанные критерии, которые должны быть выработаны и систематизированы по максимально относимым к понятию «конкурентоспособность государства» направлениям (внутриполитические и внешнеполитические, законодательные, внутри- и внешнеэкономические, социальные, технические и другие параметры) и получить численное выражение, не могут не иметь в качестве своего основания специфические «государственные характеристики». К последним в контексте понятия «конкурентоспособность государства» можно отнести: 1) внутриполитическую стабильность и внешнеполитическую открытость государства; 2) строгую приверженность государства правовым нормам межгосударственного сотрудничества на глобальном, региональном, много- и двустороннем уровнях взаимодействия.

Также очевидно, что признаваемая ныне всеми тесная, а зачастую и жесткая взаимосвязь феноменов политики и экономики, приводящая многих политологов к осмыслению экономики как продолжению политики, диктует соответствующие восприятие и адаптацию некоторых экономических категорий в политическом контексте «конкурентоспособности государства». К таким «адаптивноспособным» категориям можно отнести широко применяемое в экономической сфере понятие «недобросовестная конкуренция»[1].

«Недобросовестная конкуренция» в межгосударственном масштабе осмысления указывает на элементы искусственного, а значит экономически необъективного ограничения и, по аналогии с недобросовестной конкуренцией во внутригосударственных рамках, также высвечивает незаконный характер такого ограничения, хотя и имеющий, в сравнении с внутренними законодательными нормами, не столь очевидный и объективированный вид. В межгосударственном измерении «недобросовестная конкуренция» препятствует реализации объективных возможностей и способностей конкретного государства выступить конкурентоспособным субъектом при осуществлении взаимовыгодных проектов. Если при этом, плюс ко всему, прослеживаются явные аналогии с тем, что на экономическом языке именуется «сговором участников рынка», то налицо «удушающе-силовой» прием конкурентной борьбы в межгосударственном масштабе.

Реалии осуществленных (нефтепровод Баку-Тбилиси-Джейхан), находящихся в процессе реализации (газопровод Баку-Тбилиси-Эрзерум) и планируемых проектов (железнодорожная магистраль Карс-Ахалкалаки-Тбилиси-Баку) на Южном Кавказе дают основания говорить об осуществлении со стороны «стандартных» стран-участников всех трех упомянутых проектов действий по отношению к Армении, соответствующих понятиям «недобросовестная конкуренция» и «сговор участников рынка». «Недобросовестность» и «сговор» проявляются в том, что экономические, а значит объективные критерии эффективности реализации данных проектов (стоимость, открытие новых перспективных рынков и т.д.), были пожертвованы в угоду политическим целям отмеченного выше «удушающе-силового» свойства (блокада; угрозы применения силы; постановка неприемлемых и незаконных предусловий по вопросам, не имеющим какого-либо отношения к экономической реализации проектов).

Не трудно догадаться о целях такой политики, направленной не на цивилизованную методологию разрешения конфликтных узлов в регионе (создание доверия в регионе – осуществление взаимовыгодных экономических проектов, смягчающих военно-политический

---

[1] «...свободной конкуренции, призванной детерминировать благоприятное состояние на рынке, противостоят два «врага». Первый – недобросовестная конкуренция. Ее конкретное содержание в различных странах в различные периоды развития рынка раскрывается неодинаково. Общая же суть вытекает из самого словосочетания, то есть демонстрирует такую состязательность на рынке, когда ее участники пренебрегают общепринятыми нормами нравственности, допускают действия, противоречащие честным обычаям в области производства и торговли.

Более опасна для свободной конкуренции монополия – прямой ее антипод. Понятие «монополия» отражает концентрацию капитала, производства, торговли в руках одного или нескольких хозяйствующих субъектов» (*Жилинский С.Э.*, Предпринимательское право (правовая основа предпринимательской деятельности), М., 2000, с. 332.

контекст конфликтов – непосредственное разрешение конфликта новым поколением, успевшим оценить плоды экономического сотрудничества и взаимной безопасности), а основанных на силовом нажиме, создании ситуации безысходности.

Если возможно было бы «закрыть» Армению не только с суши и с моря, но и с воздуха, то и это было бы осуществлено. Косвенные попытки создать, как минимум, «имиджевые» препятствия для Армении и в воздушном сообщении продолжили свое выражение уже в первые дни 2007 года[1].

Примечательно, что политика осуществления «недобросовестной конкуренции», оперирующая терминами «объективного регионального монополизма», не только абсолютно контрпродуктивна для «стран-монополистов» указанных региональных проектов, но и чем дальше, тем больше отдаляет их от достижения политических дивидендов, «отданных в заложники» осуществляемым экономическим проектам в обход и в «наказание» Армении. Причем это будет проявляться не только и не столько в очевидных противоречиях между провозглашаемыми приоритетами и реально осуществляемой политикой[2], а прежде всего в том, что блокируемая территориально Армения будет вынуждена искать компенсирующие элементы того же территориального свойства. В этом контексте разговоры о возвращении каких-либо территорий в каком-либо размере выглядят абсолютным нонсенсом. Республика Армения и Нагорно-Карабахская Республика будут исходить из того, что если международно признанные 35 км государственной границы между Республикой Армения и Ираном являются исключительным и безальтернативным «окном» для первой к реализуемым и планируемым в регионе проектам, то и дополнительные 120 км границы с Ираном, контролируемые ныне НКР, являются именно тем исключительным и безальтернативным компенсирующим ресурсом для преодоления последствий направленной против них политики «удушающе-силового» и «недобросовестно-конкурирующего» свойства.

Михаил Агаджанян

[1] «Воздушное пространство Армении открыто для всех гражданских самолетов. Об этом ИА REGNUM заявила пресс-секретарь Главного управления гражданской авиации Армении Гаяне Давтян, комментируя информацию, распространенную Управлением мусульман Кавказа, о том, что порядка двух тысяч паломников из Азербайджана ожидают в аэропортах Саудовской Аравии получения воздушного коридора от Армении. Представитель ГУГА отметила также, что армянская сторона из Саудовской Аравии не получала каких-либо запросов о предоставлении воздушного коридора» (Воздушное пространство Армении открыто для всех гражданских самолетов, www.regnun.ru/news/764111.html, 09.01.2007).

[2] Кроме «абстрактного» (для турок) примера Северного Кипра (преодоление экономической изоляции турок-киприотов), более конкретным выглядит, например, противоречие между стремлением Турции к полноправному членству в Европейском Союзе и изоляцией самой Турцией одной из стран Южного Кавказа, которая учавствует в Программе действий Армения – ЕС «Европейская политика соседства».

Приложение 1

Экономические международные структуры и методология в сфере расчета конкурентоспособности государств

Исследованиями рейтинга конкурентоспособности национальных экономик в системе мирового хозяйства занимаются несколько авторитетных международных организаций. Наиболее репрезентативный показатель конкурентоспособности впервые был разработан известной международной организацией – Всемирным экономическим форумом *(World Economic Forum, WEF)* в 1986 году. Ежегодный доклад по конкурентоспособности стран в системе мирового хозяйства готовится под эгидой Всемирного экономического форума Международным институтом менеджмента (Швейцария, г. Лозанна).

Оценка конкурентоспособности стран проводится по методике, разработанной Всемирным экономическим форумом, на основании показателей сводного индекса конкурентоспособности (*Growth Competitiveness Index*). Сводный индекс конкурентоспособности выводится на основе агрегирования трех индексов, их также можно назвать главными факторами устойчивого конкурентоспособного экономического роста: **технология, общественные институты и макроэкономическая среда**.

Для подсчета рейтинга конкурентоспособности анализируются 312 показателей, из них 73 показателя используются лишь как вводная информация о стране и в конечном рейтинге не отражаются. Остальные 239 критериев, которые находят отражение в конечном рейтинге, сгруппированы в восемь агрегированных факторов[1].

Приложение 2

Показатели сводного индекса конкурентоспособности стран мира за 2006 год *(Growth competitiveness index rankings 2006)*[2]

Страна	*Место*	*ИК*[3]	*Страна*	*Место*	*ИК*	*Страна*	*Место*	*ИК*
Швейцария	1	5.81	Индия	43	4.44	Грузия	85	3.73
Финляндия	2	5.76	Кувейт	44	4.41	Молдова	86	3.71
Швеция	3	5.74	Южная Африка	45	4.36	Сербия и Черногория	87	3.69
Дания	4	5.70	Кипр	46	4.36	Венесуэла	88	3.69
Сингапур	5	5.63	Греция	47	4.33	Босния и Герцеговина	89	3.67
США	6	5.61	Польша	48	4.30	Эквадор	90	3.67
Япония	7	5.60	Бахрейн	49	4.28	Пакистан	91	3.66
Германия	8	5.58	Индонезия	50	4.26	Монголия	92	3.60
Нидерланды	9	5.56	Хорватия	51	4.26	Гондурас	93	3.58
Великобритания	10	5.54	Иордания	52	4.25	Кения	94	3.57
Гонконг (ОАР)[4]	11	5.46	Коста-Рика	53	4.25	Никарагуа	95	3.52
Норвегия	12	5.42	Китай	54	4.24	Таджикистан	96	3.50
Тайвань[5]	13	5.41	Маврикий	55	4.20	Боливия	97	3.46
Исландия	14	5.40	Казахстан	56	4.19	Албания	98	3.46
Израиль	15	5.38	Панама	57	4.18	Бангладеш	99	3.46
Канада	16	5.37	Мексика	58	4.18	Суринам	100	3.45
Австрия	17	5.32	Турция	59	4.14	Нигерия	101	3.45
Франция	18	5.31	Ямайка	60	4.10	Гамбия	102	3.43
Австралия	19	5.29	Сальвадор	61	4.09	Камбоджа	103	3.39
Бельгия	20	5.27	Россия	62	4.08	Танзания	104	3.39
Ирландия	21	5.21	Египет	63	4.07	Бенин	105	3.37

[1] О рейтинге конкурентоспособности государств и методике его определения см. http://www.iimp.kz/default.aspx?article_id=949 (Международный институт современной политики, Республика Казахстан, г. Алматы).

[2] http://www.weforum.org/pdf/Global_Competitiveness_Reports/Reports/gcr_2006/gcr2006_rankings.pdf. (сайт Всемирного экономического форума).

[3] Индекс конкурентоспособности.

[4] Особый административный район Китая.

[5] Самоуправляемая территория Китая.

Страна	*Место*	*ИК*[3]	*Страна*	*Место*	*ИК*	*Страна*	*Место*	*ИК*
Люксембург	22	5.16	Азербайджан	64	4.06	Парагвай	106	3.33
Новая Зеландия	23	5.15	Колумбия	65	4.04	Кыргызстан	107	3.31
Респ. Корея	24	5.13	Бразилия	66	4.03	Камерун	108	3.30
Эстония	25	5.12	Тринидад и Тобаго	67	4.03	Мадагаскар	109	3.27
Малайзия	26	5.11	Румыния	68	4.02	Непал	110	3.26
Чили	27	4.85	Аргентина	69	4.01	Гайана	111	3.24
Испания	28	4.77	Марокко	70	4.01	Лесото	112	3.22
Чехия	29	4.74	Филиппины	71	4.00	Уганда	113	3.19
Тунис	30	4.71	Болгария	72	3.96	Мавритания	114	3.17
Барбадос	31	4.70	Уругвай	73	3.96	Замбия	115	3.16
ОАЭ	32	4.66	Перу	74	3.94	Буркина-Фасо	116	3.07
Словения	33	4.64	Гватемала	75	3.91	Малави	117	3.07
Португалия	34	4.60	Алжир	76	3.90	Мали	118	3.02
Таиланд	35	4.58	Вьетнам	77	3.89	Зимбабве	119	3.01
Латвия	36	4.57	Украина	78	3.89	Эфиопия	120	2.99
Словакия	37	4.55	Шри-Ланка	79	3.87	Мозамбик	121	2.94
Катар	38	4.55	Македония	80	3.86	Тимор-Лешти	122	2.90
Мальта	39	4.54	Ботсвана	81	3.79	Чад	123	2.61
Литва	40	4.53	Армения	82	3.75	Бурунди	124	2.59
Венгрия	41	4.52	Доминик. республика	83	3.75	Ангола	125	2.50
Италия	42	4.46	Намибия	84	3.74			

ՎԱՀԱԲԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

ԽՍՀՄ փլուզումից և ստեղծված գաղափարական վակուումից հետո Ադրբեջանում իրենց դիրքերն սկսեցին ամրապնդել առանձին կրոնական ուղղություններ: Այդ հարցում կարևոր դեր խաղաց արտաքին գործոնը, ինչը դրսևորվեց իրանական, թուրքական և արաբական ուղղություններով:

Այս տեսանկյունից ուշագրավ է արաբական ուղղությունը, որ բնորոշվում է Ադրբեջանում վահաբականության տարածմամբ:

Վահաբականությո՞ւն, թե՞ սալաֆիականություն. խնդրի մեթոդաբանական կողմը

Իսլամի պատմության բոլոր ժամանակներում որպես իսլամական հասարակության և պետության կազմակերպման էտալոն համարվել է Մադինայի շրջանը (622-632), երբ ձևավորվեց առաջին իսլամական համայնքը, որ կապված է Մուհամեդ մարգարեի գործունեության հետ: Իսլամի պատմության գրեթե բոլոր ժամանակներում ի հայտ են եկել իսլամական կրոնաքաղաքական շարժումներ, որոնք կոչ են արել վերադառնալ վաղ իսլամի ակունքներին: Իսլամական վերածննդին միտված կրոնական ուղղությունը կոչվում է սալաֆիականություն, որ առաջացել է արաբերեն *աս-սալաֆ* `նախահայր եզրից: Հենց սալաֆիականության դիրքերում էր կանգնած Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահաբը՝ 18-րդ դարի կրոնական քարոզիչը, որի ուսմունքը ստացավ վահաբականություն անվանումը: Պատմականորեն վահաբականությունը վճռորոշ դերակատարություն ունեցավ Սաուդյան Արաբիայի պաշտոնական գաղափարախոսության ձևավորման հարցում: 1970-ականներից ֆինանսական արագընթաց և աննախադեպ հաջողությունները նպաստեցին, որպեսզի Սաուդյան Արաբիան գործնականում իրականացնի վահաբականության արտահանումը՝ նպատակադրվելով իսլամը դարձնել գլխավոր գործող ուժը՝ մահմեդական աշխարհում իր առաջնայնությունը հիմնավորելու համար: Նա զգալի միջոցներ հատկացրեց ողջ իսլամական աշխարհում վահաբական քարոզչության համար, որի դրսևորումներից է սաուդական կրթական հաստատություններում երիտասարդ մահմեդականների ուսումնառության կազմակերպումը, մզկիթների շինարարությունը, իսլամական կենտրոնների ստեղծումը, միսիոներների պատրաստումը: Այս պրակտիկան Սաուդյան Արաբիան օգտագործեց նաև հետխորհրդային տարածքում, այդ թվում՝ Ադրբեջանում:

Ներկայումս վահաբականություն եզրը երկակի նշանակություն ունի: Մի կողմից՝ այն կարելի է դիտարկել որպես ներկայիս Սաուդյան Արաբիայի պետական գաղափարախոսություն (որի հիմքում ընկած է աստվածապետության գաղափարը), մյուս կողմից՝ վահաբականությունը Ռիադի հսկողությունից դուրս արմատական կրոնաքաղաքական հոսանք է, որը շատ դեպքերում նույնացվում է ահաբեկչության, ծայրահեղականության և մոլեկրոնության հետ:

Վահաբականության սկզբնավորումն Ադրբեջանում. հիմնական շարժառիթները

Վահաբականությունն Ադրբեջան ներթափանցեց 1990-ականների սկզբին հիմնականում Ղարաբաղյան պատերազմի (1991-1994), ռուս-չեչենական պատերազմների (1994-1996թթ., 1999թ.) արդյունքում, դաղստանցի, չեչեն և արաբ վահաբի քարոզիչների, Ադրբեջանում հաստատված չեչեն փախստականների, ինչպես նաև Սաուդյան Արաբիայում և արաբական այլ երկրներում ուսանած ադրբեջանցի երիտասարդների միջոցով:

Տարածաշրջանում արմատական իսլամական ուղղությունների ներկայությունը պայմանավորված էր աշխարհաքաղաքական այն նոր իրողություններով, որ ի հայտ եկան ԽՍՀՄ փլուզումից հետո: Նորանկախ Ադրբեջանում ազդեցություն ձեռք բերելու համար պայքարում

էին Թուրքիան և Իրանը (որոշ առումով՝ նաև Սաուդյան Արաբիան), որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր Ադրբեջանում գերակա դարձնել գաղափարախոսական իր ազդեցությունը:

Վահաբականությունն ադրբեջանական աշխարհիկ իրականության մեջ գաղափարական առումով նոր երևույթ էր: Անկախության ձեռքբերումից հետո, չնայած ազգային-կրոնական զարթոնքին, ադրբեջանցիների ինքության մեջ կրոնը ոչ առաջնային բաղադրիչ է: Իսկ իսլամական պետություն ստեղծելու գաղափարը Ադրբեջանում երբեք համընդհանուր աջակցություն չի ստացել:

Հատկանշական է, սակայն, որ Ադրբեջանի իշխանությունները, որոնք Ծոցի երկրներից զգալի ֆինանսական և քաղաքական օժանդակության ակնկալիքներ ունեին հատկապես Ղարաբաղի հարցում, սկզբնական շրջանում դրականորեն էին վերաբերվում Ադրբեջանում վահաբականության ներկայությանը: Նախագահ Հեյդար Ալիևի պատվերով վահաբական կողմնորոշման 1000-1500 արաբ աֆղանցի մոջահիդներ մասնակցեցին Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմին:

1990-ականների սկզբին Բաքվում հիմնվեց իսլամական համալսարան՝ Սաուդյան Արաբիայի աջակցությամբ: 1991թ. Ադրբեջանը սկսեց ինտեգրվել Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը: 1994-ին Հ.Ալիևի Մեքքա կատարած ուխտագնացությունից հետո համագործակցությունը Ծոցի երկրների հետ ամրապնդվեց: 1994-ին Ադրբեջանում սկսեցին գործել սաուդական (մասնավորապես Իսլամական աշխարհի լիգայի վերահսկողության) մի քանի միջազգային իսլամական կազմակերպություններ և բարեգործական հիմնադրամներ, այդ թվում՝ «Փրկությունը» և «Երկու սրբավայրերը» (որոնց մասնաճյուղերից շատերը 9/11-ից հետո ԱՄՆ ճնշմամբ փակվեցին միջազգային ահաբեկչությանն աջակցելու և ֆինանսավորելու պատճառով):

Ադրբեջանում վահաբականության քարոզչությունը սկսվեց հյուսիսային՝ Դաղստանին սահմանակից շրջաններից՝ առանձին դեպքերում որոշակի հաջողություններ ունենալով երկրի հյուսիսային շրջանում բնակվող սուննիադավան ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ անջատողական տրամադրություններ ունեցող լեզգիների շրջանում: 1995-ից ի վեր վահաբականության աշխարհագրությունն ընդլայնվեց՝ աստիճանաբար ներառելով Բաքուն և նրա շրջակայքը (հետագայում՝ որոշ չափով նաև կենտրոնական և հարավային շրջանները): Քարոզչության կարևոր բաղկացուցիչներն էին վահաբական գրականության տարածումը, վահաբական ուղղվածությամբ մեդրեսեների ու մզկիթների կառուցումը: Վահաբիները (որոնք տիրապետում էին զգալի ֆինանսական ռեսուրսների) ավելի մեծ հաջողության էին հասնում սոցիալապես անապահով շրջաններում, իսկ հայրենիքում ուսման հեռանկար չունեցող երիտասարդներից շատերին կրոնական կրթության ուղարկում Սաուդյան Արաբիա կամ այլ արաբական երկրներ:

Աբու Բաքր մզկիթը

1997-ին Բաքվի Նարիմանով թաղամասում քուվեյթյան Իսլամական ժառանգության վերածնունդ կազմակերպության ադրբեջանական մասնաճյուղի միջոցով կառուցվեց իր մեծությամբ և ճարտարապետությամբ աննախադեպ Աբու Բաքր մզկիթը, որ համարվում է Ադրբեջանում վահաբականության կենտրոնը: Ի տարբերություն տեղական մզկիթների, որոնք կարող են տեղավորել մոտ 300 այցելուի, Աբու Բաքրը տեղավորում է ավելի քան 5000 հավատացյալի: Այն Բաքվի ընդգծված աշխարհիկ քաղաքային մշակույթի մեջ ստեղծեց որոշակի իսլամական մթնոլորտ: Աբու Բաքր հաճախողների մեջ հիմնականում գերակայող էր սուննիական կողմնորոշում ունեցող, սոցիալապես անապահով և հակահիշխանական ուղղվածությամբ կրոնականացված, սակայն ոչ մեծ զանգվածը, որն աչքի էր ընկնում որոշակի վահաբական իմիջով՝ դեմքի արտահայտությամբ, վահաբական ոճի՝ կարճ տաբատով և մորուքով: Մզկիթ հաճախողների մեջ էր նաև չեչենական տարրը, որը մինչ այդ հաճախում էր Բաքվի հին քաղաքում գտնվող Լեզգիական մզկիթը:

Աբու Բաքրը Ադրբեջանի կրոնական մշակույթի մեջ մեծացրեց ուրբաթօրյա կրոնական քարոզի՝ *խուտբայի* նշանակությունը, որի ինստիտուտն Ադրբեջանում լայն տարածում չուներ: Բավական կարճ ժամանակում Աբու Բաքրը կարողացավ ճանաչում ձեռք բերել՝ չնայած սուննիական ուղղվածությանը, որի հարցում կարևոր նշանակություն ունեցան մզկիթի

երիտասարդ իմամի՝ Համեթ Սուլեյմանովի քարոզները, հռետորականության նրա ձիրքը, աստվածաբանական պատրաստվածությունը: Վերջինս կրոնական կրթություն էր ստացել նախ Խարթումի իսլամական համալսարանում, ապա՝ Մեդինայի միջազգային իսլամական համալսարանում: Ադրբեջանական իշխանությունների բազմաթիվ փաստարկումների համաձայն՝ Աբու Բաքր մզկիթը ներգրավված է եղել ադրբեջանցի երիտասարդների հավաքագրման մեջ, որոնք ուղարկվել են Աֆղանստան, Չեչնիա, Իրաք: 2006-ի մարտին ադրբեջանական լրատվամիջոցներում տարածված տեղեկատվության համաձայն՝ Գուանտանամոյի բանտարկյալներից մեկը Ադրբեջանի քաղաքացի է, ով Բեն Լադենի թարգմանիչն է եղել և հավաքագրվել է հենց Աբու Բաքր մզկիթում:

Վահաբականությունը՝ սպառնալիք Ադրբեջանի ազգային անվտանգությանը

Աստիճանաբար Ադրբեջանում վահաբականությունը դարձավ անկառավարելի և (չնայած հետևորդների փոքր թվաքանակին) սպառնում էր ապակայունացնել իրավիճակը երկրում: Վահաբական կողմնորոշման մզկիթներում և առհասարակ վահաբական քարոզչության մեջ գերիշխող էր դարձել հակակառավարական հռետորականությունը: Իշխանությունները մեղադրվում էին սոցիալական և քաղաքական ձախողումների, այդ թվում՝ Ղարաբաղի պատերազմը տանուլ տալու մեջ: Հակակառավարական դիսկուրսը նպաստում էր գնալով ավելացող վահաբական մզկիթների շուրջ որոշակի համախմբմանը կամ վահաբական համայնքի աշխուժացմանը, ուր հաշվվում էր 7000-15000 մարդ:

Իշխանությունները գիտակցում էին, որ իսլամը կարող է դառնալ անվերահսկելի քաղաքական գործոն թե՛ ներքին կյանքում, թե՛ էթնոդավանական փոքրամասնությունների շրջանում: Դեռևս 1995-ին որոշվեց, որ իսլամական բոլոր կազմակերպություններն ու մզկիթները պետք է ենթարկվեին մեկ կենտրոնի՝ Կովկասի մահմեդականների վարչությանը: 1996թ. Ադրբեջանի խորհրդարանի որոշմամբ արգելվեց միսիոներների գործունեությունը, իսկ տեղական կրոնական համայնքներին պարտադրվեց գրանցվել:

Ադրբեջանում գործում էին նաև միջազգային իսլամական արմատական մի շարք կազմակերպությունների մասնաճյուղեր (Հիզբ աթ-Թահրիր, Ջամաաթ աթ-Թաբլիղ, Իսլամական ջիհադ, Ջեյշ ուլ-իսլամ), որոնց գործունեությունը հիմնականում պայմանավորված էր միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի հարաճուն ակտիվացմամբ: Այս տեսանկյունից Ադրբեջանը՝ որպես *իսլամի աշխարհ,* դիտարկվում էր Արևմուտքի դեմ պայքարի բաղկացուցիչ: Ադրբեջանի տարածքը շատ դեպքերում օգտագործվում էր Չեչնիա զենք, ֆինանսական և նյութական միջոցներ ու գրոհայիններ տեղափոխելու համար: Հետաքննության դաշնային բյուրոյի տվյալներով՝ 1998թ. Քենիայի և Տանզանիայի ամերիկյան դեսպանատների պայթյունների կազմակերպման մեջ մասնակից էր Իսլամական ջիհադի Բաքվի մասնաճյուղը, որը սերտորեն համագործակցում էր Բեն Լադենի Ալ-Կաիդայի հետ: Այս շրջանում և ապա 2001-ից հետո կար Վաշինգտոնի ճնշումը՝ պայքարելու երկրում իսլամական արմատական խմբավորումների դեմ: Վահաբականության դեմ պայքարի հարցում հետաքրքրված էին նաև Անկարան և Թեհրանը:

Ադրբեջանի իշխանությունները 2001-ի վերջերից առավել ինտենսիվ կերպով սկսեցին հետապնդել վահաբականներին: Փակվեցին վահաբական կողմնորոշման մի շարք մզկիթներ, ահաբեկչություններ կազմակերպելու մեղադրանքով ձերբակալվեցին և բանտարկվեցին վահաբականության բազմաթիվ համախոհներ: Վահաբականների դեմ վերջնականորեն ձևավորվեց որոշակի հասարակական կարծիք, որի հարցում բացի իշխանություններից իր դերակատարումն ունեցավ բարձրաստիճան շիա հոգևորականությունը: Վահաբականներն անվանվում էին մորուսավորներ, սևամորուսներ, նույնացվում ահաբեկիչների հետ:

2002թ. մայիսին Ադրբեջանի Ազգային անվտանգության փոխնախարար Թոֆիկ Բաբաևի հայտարարության համաձայն՝ արաբական մի շարք երկրներ հետաքրքրված են Ադրբեջանում արմատական վահաբականության տարածմամբ, ինչն իրականացվում է հնարավոր ակտիվիստներին ֆինանսական օժանդակություն ցույց տալով, մարզական ճամբարներ ուղարկելով, արմատական ռեսուրսն ահաբեկչության մեջ օգտագործելով:

Վահաբականությունը 2005թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրությունների նախօրեին և դրանից հետո

2005թ. նոյեմբերին Ադրբեջանում խորհրդարանական ընտրությունների նախօրեին իշխանություններն ավելի ու ավելի շատ էին խոսում այն մասին, որ վահաբականությունը վտանգ է ներկայացնում Ադրբեջանի քաղաքական կայունությանը: Նման մտավախությունը հիմնավորվում էր որոշակի փաստարկումներով: Շրջանառվեց Ասիայի մահմեդականների Քուվեյթի հանձնախմբի կողմից Կովկասի մահմեդականների վարչության անունով ուզբեկերեն, ղազախերեն, արաբերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով Բաքու 14 տոննա (իսկ դրանից առաջ՝ 10 տոննա) կրոնական գրականության առաքման մասին տեղեկատվությունը: Իշխանություններն արգելեցին գրքերի տարածումը, քանի որ դրանցից շատերի մեջ բաց ձևով քարոզվում էր վահաբականությունը, հակադրվում էին շիա և սունիի ուղղությունները:

Ընտրությունների նախօրեին Ադրբեջանի իշխանությունները քաղաքականությամբ զբաղվող կրոնական գործիչներին արգելեցին շարունակել կրոնական գործունեությունը:

Հատկանշական է, որ ընդդիմությունն իշխանություններին մեղադրում էր վահաբական խաղաքարտը շահարկելու մեջ: Ըստ այդմ՝ իշխանությունները ձգտում էին ընտրությունների նախօրեին շահել բնակչության համակրանքը՝ նրանց մեջ արմատական իսլամի նկատմամբ վախի մթնոլորտ ստեղծելով: Ընդդիմադիրների պնդմամբ՝ վահաբականության սպառնալիքի չափերը մեծացնելով՝ Բաքուն միևնույն ժամանակ ձգտում էր Արևմուտքից որոշակի ֆինանսական միջոցներ ստանալ՝ ահաբեկչության դեմ պայքարելու հիմնավորմամբ:

Կարելի է ասել, որ Ադրբեջանի հատուկ ծառայություններին հաջողվեց հիմնականում վերահսկել արմատական մզկիթների (այդ թվում՝ վահաբական) և իսլամական կրոնաքաղաքական արմատական ցանցային կառույցների գործունեությունը երկրում: Արդեն 2007թ. փետրվարին Հիդայաթ Օրուջովը՝ Կրոնական կառույցների գծով պետական կոմիտեի նախագահը, հայտարարեց, որ Ադրբեջանում կա վահաբականություն, բայց այն այլևս վտանգ չի ներկայացնում երկրի պետական անվտանգությանը: Այն, որ իշխանությունները հանդուրժում են Աբու Բաքրի գոյությունը, վկայում է այն մասին, որ Սուլեյմանովը քաղաքական բանավեճերին չի մասնակցում, այլ սահմանափակվել է վահաբական հռետորականությամբ, որի կարևոր բաղկացուցիչը հակաարևմտյան և հակաամերիկյան քարոզչությունն է:

Այսպիսով՝

- Վահաբական գործոնի ակտիվացմանը նպաստեցին ադրբեջանական հասարակության մեջ առկա սոցիալական խնդիրները, հասարակության բևեռացումը, կոռուպցիան, բարոյական արժեքների անկումը, ժողովրդավարության պակասը, որոնք հանգեցրին հիասթափության ավանդական կրոնական ինստիտուտների և ազատական արժեքների նկատմամբ:
- Մյուս կողմից՝ վահաբականների գործունեությունն Ադրբեջանում կարելի է դիտարկել որպես միջազգային իսլամական արմատական շարժման մի բաղկացուցիչը:
- Ադրբեջանում վահաբականության նահանջին նպաստեցին Ղարաբաղի պատերազմում Ադրբեջանի պարտությունը, իսլամական համերաշխության գաղափարի ոչ կենսունակությունը, վահաբականության պարտությունը Չեչնիայում և Բալկաններում:
- Այս հարցում ոչ պակաս կարևոր գործոն է այն, որ վահաբականությունը ծայրահեղ անհանդուրժող էր տրամադրված շիականության և հատկապես ժողովրդական իսլամի նկատմամբ, որոնք ամուր հիմքեր ունեն Ադրբեջանում:

Արաքս Փաշայան
«Նորավանք» ԳԿՀ

ИРАН, США, ИЗРАИЛЬ И СИРИЯ: ВОЕННЫЙ БАЛАНС НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ

Оценка военного баланса среди основных игроков на Ближнем Востоке затруднена, так как точных данных не существует. Приведенные данные основываются на анализе ряда центров, таких как *The International Institute for Strategic Studies, Jaffee Center for Strategic Studies, Jane's World Armies*.

Иран

Вооруженные силы Ирана обладают особенной структурой – они разделены на две независимые структуры: армию и Корпус стражей исламской революции (КСИР).

В рамках КСИР существует специально обученный резерв – силы сопротивления «Басидж», подготовленный на случай мобилизации.

В целом численность вооруженных сил оценивается в 545 тыс. человек. Из них армия – 350 тыс. человек, КСИР – 125 тыс. (из которых 15 тыс. относятся к специальным диверсионным отрядам «Коде»), ВМС – 18 тыс., ВВС и ПВО – 52 тыс., другие вооруженные формирования – 400 тыс. Кроме того, численность обученного состава резервистов составляет порядка 350 тыс. человек (по данным *The International Institute for Strategic Studies*, численность «Басидж» достигает 1 млн). Таким образом, в целом под ружьем в военное время в первые же дни будет стоять порядка 900 тыс. человек, что делает армию Ирана крупнейшей в регионе. (По другим оценкам, численность вооруженных сил Ирана достигает 900 тыс. без учета резерва.)

Сухопутные войска Ирана по состоянию на 2000 год насчитывали 44 дивизии (32 пехотные, семь бронетанковых, три механизированных, одна воздушно-десантная и одна воздушно-штурмовая) и 24 отдельные бригады (17 пехотных, две бронетанковые и пять воздушно-десантных). Кроме того, в составе сухопутных войск Ирана имеются семь ракетных бригад, десять артиллерийских групп, группы зенитной артиллерии, инженерные и химические подразделения, части армейской авиации. На вооружении соединений сухопутных войск насчитывается 2400 танков, около 1500 БМП и БТР, около 2000 орудий полевой артиллерии, свыше 700 реактивных систем залпового огня и 4-5 тысяч минометов калибром свыше 60 миллиметров.

По разным оценкам, на вооружении у ВС Ирана находятся от 1500 до более 2400 танков. В основном это танки Т-72, которые производятся в Иране по лицензии (Сафир-74), китайские танки Т-59, Т-69, британские Мк-3 и Мк5, американские М-60, которые были поставлены еще до революции. Основная новая боевая единица – иранский тяжелый танк *Zulfiqar* (Золфагар), а также легкие танки *Towsan* (Тосан). Количество БМП и БТР превосходит 1000 единиц, из которых 400 составляют модернизированные БМП-2, а 300- БТР50 и БТР-60.

На вооружении у ВС Ирана находятся порядка тысячи установок РСЗО, из которых более 700 – это 107мм установки Фаджр-1, а также несколько десятков 240мм и 333мм Фаджр-3 и Фаджр 5 соответственно. Количество полевой артиллерии достигает 2 тыс. единиц, около тысячи безоткатных орудий. Кроме того, на вооружении у Ирана есть более грозное вооружение – тактические ракеты ближней и средней дальности. На вооружении находятся ракеты Скад-С/Скад-В (дальность полета – 300км и 700км соответственно). Их количество оценивается примерно в 18 пусковых установок и порядка 300 ракет. Количество ракетных установок CSS-8 и аналогичных с дальностью до 180 км достигает 50.

На вооружении ВВС Ирана находится около 280 самолетов.

Истребительная авиация – примерно 160 единиц, из них: 80 F-5, 24 F-7, 24 F-1.

Ударная авиация – примерно 100 единиц, из них: 7 Су-25, 30 Су-24, более 260 F-4.

Кроме того, в Иране остались несколько десятков самолетов ВВС Ирака, которые были эвакуирования во время первой Иракской войны в 1991 году.

Основные силы ПВО Ирана составляют С-75, «Хок», С-200, «Рапира», «Квадрат», «Тор».

На вооружении ВМС Ирана находятся 3 фрегата, 2 корвета, 20 ракетных и 20 торпедных катеров (по другим сведениям, количество боевых катеров доходит до 200), 13 десантных кораблей, 28 вспомогательных судов, 3 подводные лодки, 22 самолета и 15 вертолетов.

Основной опасностью в случае региональной войны для войск США, а также территорий союзных государств может стать баллистическая ракета *Shahab-3* с дальностью полета до 1300 км. Количество этих ракет, стоящих уже на вооружении, оценивается в 25-100 единиц. Уже в январе 2006г. появилась информация об успешных испытаниях двухступенчатой ракеты *Shahab-4*, дальность действия которой достигает уже 2 тыс. км. Кроме того, есть информация о том, что идет активная разработка трехступенчатой ракеты *Shahab-5*, дальность действия которой превысит 4 тыс. км.

Кроме того, Иран производит химическое оружие (до 1000 тонн ежегодно) и имеет запас боеголовок с ОВ для тактических ракет.

Учитывая тот факт, что в случае атаки на Иран, Тегеран в основу своей стратегии поставил пункт по закрытию Ормузского пролива для осуществления нефтяной блокады Запада, особое значение придается теперь средствам поражения морской силы. В случае, если Ирану удастся блокировать Ормузский пролив, будет приостановлена подача порядка 40% мировой нефти. В связи с этим для Тегерана насущной проблемой становится возможность уничтожения авианосных группировок США, размещенных в районе Персидского залива.

Наиболее опасными для американских ВМС в Персидском заливе могут стать новые вооружения, поступившие в иранские ВС в 2007 году. Иран провел испытания противокорабельной ракеты дальнего действия. «Ракеты нового типа дальностью до 350 километров могут поражать крупные корабли в Персидском заливе, на всей протяженности Ормузского пролива и в северной части Индийского океана», – сообщил командующий военно-морскими силами Корпуса стражей исламской революции Али Фадави. Фактически, Иран стал третьей страной после США и России, которая производит противокорабельные ракеты дальнего действия.

В дополнение к этому, 11 февраля глава Корпуса стражей исламской революции генерал Яхья Рахим Сафави объявил о начале массового производства беспилотных летательных аппаратов по технологии «стелс». Эти летательные аппараты предназначенные для сбора разведывательной информации в радиусе до 700 километров.

Также в прошлом году было начато производство новых 76-миллиметровых корабельных орудий «Фаджр», способных поражать как морские, так и воздушные цели. Орудия будут устанавливаться на новые ракетные катера иранского производства «Джоушан» («Кольчуга»), которые в скором времени поступят на вооружение.

Иран также активно усиливает свое ПВО. По неподтвержденной информации, Тегеран год назад закупил в Украине радарные комплексы «Кольчуга», способные отслеживать не только самолеты противника, но и низколетящие крылатые ракеты. А 16 января 2007 года министр обороны России Сергей Иванов подтвердил, что в Иран были поставлены 29 зенитно-ракетных комплексов «Тор-М1», радиус действия которых составляет 12-20 км.

США на Ближнем Востоке

В Ираке Соединенные Штаты имеют по данным на январь 2007 года военный контингент в 132 тыс. военнослужащих. Ожидается, что группировка будет усилена еще 22 тыс. военнослужащих.

На вооружении у морских сил иракского контингента в 2006 году, по данным *The International Institute for Strategic Studies*, находились порядка 85 истребителей класса F/*A-18 Hornet*, более 64 самолетов типа *Harrier II* (вертикального взлета), F-15, F-16, более 12 военно-транспортных самолета *Hercules*, более 92 вертолетов огневой поддержки морской пехоты

Cobra, более 90 вертолетов *Sea Knight*, более 64 военно-транспортных вертолетов *Sea Stallion*, более 50 легких вертолетов *Iroquois*. Танковая дивизия морской пехоты укомплектована танками *Abrams* (порядка 60).

В конце января в район Персидского залива достигла вторая американская авианосная группировка во главе с авианосцем *John C. Stennis* (CVN 74), которая идет на подкрепление группировки авианосца *Eisenhower*. Авианосец *John C. Stennis* (и *John C. Stennis* и *Eisenhower* являются авианосцами класса «Нимиц») несет на себе 8 боевых эскадрилий - более 70 боевых самолетов. На борту авианосца более 5 тыс. моряков, из которых 1700 – принадлежат к боевой и технической части боевых эскадрилий. Кроме того, в составе группировки еще 5 боевых кораблей меньшего размера. *Eisenhower* несет на себе более 60 боевых самолетов.

Кроме того, порядка 25 тыс. американских военнослужащих дислоцированы в Кувейте, а в Турции находится авиабаза Инджирлик.

Израиль

Численность силы Армии обороны Израиля (ЦАХАЛ) достигает 169 тыс., с учетом резервистов – 577 тыс. (по некоторым данным – до 631 тыс.)

Танковая группировка Израиля количественно и качественно является сильнейшей в регионе (конкуренцию могут составить только ВС Турции). Количество танков достигает 3657 (по некоторым данным – порядка 4 тыс.), из которых порядка 1680 – это «Меркава» израильского производства, а также модернизированные М-60, *Centurion, Magach-7*.

Количество БМП, БТР и БРМ оценивается в 8700-10500 единиц. Причем несколько сот единиц (точное число неизвестно, более 400) – это тяжелые БТР и БМП *Nagmachon, Nakpadon, Puma,* созданные на основе танка *Centurion*.

ЦАХАЛа имеет на вооружении порядка 2 тыс. единиц артиллерийских систем. Из САУ наиболее мощными являются М110 (36 единиц, 203мм) и М107 (36 единиц, 175мм). Количество РСЗО оценивается в 200-224 единицы.

На вооружении ВВС Израиля находится 400-800 боевых самолета самолетов.

Истребительная авиация, по данным *The International Institute for Strategic Studies*, 199 единиц, из них: 110 F-16, 89 F-15.

Ударная авиация - более 177 единиц, из них: 39 A-4, 52 F-16C, 74 F-16D.

Учитывая возможную опасность ракетных атак как со стороны исламских группировок, так и сопредельных стран, ЦАХАЛ особенное внимание уделяет развитию ПВО. Система ПРО Израиля основана на развертывании систем ЗРК средней и большой дальности Arrow и Patriot (количество пусковых установок неизвестно, однако, по данным *The International Institute for Strategic Studies*, превышает 66: более 18 *Arrow*, более 48 *Patriot*). В 2006 году началась программа по модернизации системы ПРО Израиля, в которой участвуют как компании местного ВПК, так и американские - *Alliant Techsystems, Boeing*. Кроме того, в конце 2006 года началась разработка местных систем ПРО Комплексы *Magic Shield* и *David's Shield*, которые должны дополнить имеющуюся систему противоракетной обороны. Программа развития ПРО Израиля, финансируемая примерно на 70% США, должна быть завершена в 2008 году.

По неподтвержденной, но выглядящей реалистичной информации, Израиль также обладает ядерным оружием. Арсенал различные источники оценивают в среднем в 200 боеголовок.

Сирия

Численность сирийской армиии оценивается в примерно 300 тыс. Кроме этого «Рабочая милиция» партии БААС насчитывает порядка 100 тыс. бойцов (по данным *Jaffee Center for Strategic Studies,* их численность достигает 400 тыс.)

ВС Сирии обладают крупнейшей танковой группировкой в регионе – 4600-4800. Из них 1500-1700 это Т-72 и Т-72М, порядка 1000 - модификации Т-62 и 2000-2250 - Т-54 и Т-55. Однако при этом более тысячи танков не на ходу.

Количество БМП, БТР и БРМ – достигает 5 тыс., из которых лишь незначительная часть может быть классифицирована как современные. Среди БМП основная часть – порядка 2100-1450 – это БМП-1, порядка 100- БМП-2.

Артиллерия оценивается 3 -3,2 тыс. единиц, из которых порядка 500 – это САУ «Акация» и «Гвоздика». Количество противотанковых ракетных комплексов (ПТРК) оценивается различными экспертными центрами неоднозначно. В основном это ракеты «Малютка», «Бастион», а также комплексы «Фагот» (150 единиц), «Конкурс» (40-200 единиц), «Метис-М», «Корнет-Е» (до 1 тыс.)

Парк ВВС Сирии после развала СССР и прекращения поставок в целом устарел, количество летных часов у истребительной авиации в год оценивается всего в 15-15 часов. На вооружении находится порядка 650 самолетов.

Истребительная авиация – примерно 390-400 единиц, из них: 80 МиГ-29, 30-32 МиГ-25, 80-86 МиГ-23, 245 МиГ-21.

Ударная авиация - примерно 140 единиц, из них: 60 МиГ-23, 20 Су-24МК, 40-50 Су-22.

Кроме того, поступали сведения о закупках нескольких Су-27.

Количество вертолетов достигает 200 единиц. Ударная группировка состоит из 36-55 Ми-24 и 35-55 SA- 342 «Газель»

Основная составляющая ПВО Сирии - это 44-48 ПУ С-200 «Ангара», 320-480 ПУ С-75 «Двина» и С-125М «Печора», около 200 ПУ ЗРК «Квадрат».

Сирия обладает определенным запасом тактических ракет. Основная ударрная сила ракетных войск это установки «Точка» (18 и более) и «Луна-М» (18 и более), а также модификации ракет Скад (порядка 25 пусковых установок и 850 ракет).

Кроме того, Сирия обладает определенным запасом химического оружия – более 1 тыс. снарядов и более 100 боеголовок для ракет.

Самвел Мартиросян

ԱՄՆ ՀԱԿԱՀՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ. ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐ

2007թ. մարտի 1-ին ելույթ ունենալով Բրյուսելում հրավիրված մամլո ասուլիսի ժամանակ՝ Պենտագոնի Հրթիռային պաշտպանության գործակալության *(Missile Defense Agency)* տնօրեն, օդուժի գեներալ-լեյտենանտ Հենրի Օբերինգը հայտարարեց, թե Վաշինգտոնը ծրագրում է Հարավային Կովկասում տեղադրել ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) ռադիոտեղորոշիչ կայաններից (ռադար) մեկը։

Քիչ հավանական է, որ հատկապես Լեհաստանում ու Չեխիայում ԱՄՆ ՀՀՊ բաղկացուցիչների տեղադրման շուրջ ավելի վաղ սկիզբ առած ռուս-ամերիկյան լարվածության ֆոնին՝ առանց նախնական վստահության, ամերիկյան կողմը հանդես գար նման *հրապարակային* հայտարարությամբ։

Այդ ենթադրության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ նույն մամլո ասուլիսի ժամանակ գեներալ Օբերինգը անգամ նշեց այն վերջնաժամկետը, երբ ամերիկյան ՀՀՊ երեք բաղկացուցիչների տեղակայումը Եվրոպայում[1] պետք է ավարտվի՝ 2011թ.։

ԱՄՆ ՀՀՊ համակարգի ընդլայնումը

Ներկայումս առկա տեղեկությունների համաձայն՝ ԱՄՆ ՀՀՊ համակարգը բաղկացած է լինելու երեք մակարդակից։ Առաջին մակարդակը միտված է միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների ոչնչացմանը՝ մինչև միջուկային մարտագլխիկների առանձնանալը՝ այդ հրթիռների թռիչքի սկզբնական մասում։ Երկրորդ մակարդակի դեպքում օբյեկտները պետք է ոչնչացվեն միջմայրցամաքային հրթիռների թռիչքի միջին հատվածում, ուր տեղի է ունենում մարտագլխիկների առանձնացումը և թիրախների որոշակիացումը։ Եվ վերջապես, երրորդ մակարդակով նախատեսված է մարտագլխիկների ոչնչացում նրանց թռիչքի վերջնական մասում։

Պենտագոնի համար նախընտրելի է հրթիռների և թռչող այլ օբյեկտների ոչնչացման գործում սահմանափակվել առաջին մակարդակով։ Հետևաբար, էական նշանակություն է ձեռք բերում հրթիռային զինանոց ունեցող ԱՄՆ հավանական հակառակորդներին հարակից տարածքներում ՀՀՊ համակարգի տարրերի հիմնումը՝ ռադիոտեղորոշիչ կայաններ, հակահրթիռային հարվածային միջոցներ և այլն։

Իր պաշտոնավարման սկզբում ձեռնամուխ լինելով ԱՄՆ Ազգային հակահրթիռային պաշտպանության *(National Missile Defense)* համակարգի տեղակայմանը՝ Ջորջ Բուշ-կրտսերը հայտարարեց, թե համակարգը ներառելու է նաև Վաշինգտոնի դաշնակիցների պաշտպանությունը։

2007թ. փետրվարի 27-ին ելույթ ունենալով Լոնդոնում բրիտանական *Royal United Services Institute-ի (RUSI)* կազմակերպած ՀՀՊ 8-րդ միջազգային կոնֆերանսում՝ ԱՄՆ պետքարտուղարի միջազգային անվտանգության ու չտարածման հարցերով օգնական Ջոն Ռուդը ներկայացրեց այն 14 երկրների ցանկը, որոնց հետ Միացյալ Նահանգները համագործակցում է ՀՀՊ հարցում՝ Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Դանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Իսրայել, Հնդկաստան, Ճապոնիա, Նիդեռլանդներ, Թայվան, Ուկրաինա, Լեհաստան ու Չեխիա[2]։

---

[1] Պենտագոնը նշված երեք բաղկացուցիչների թվին է դասում Չեխիայում ու Հարավային Կովկասում տեղակայվելիք ռադարները, ինչպես նաև Լեհաստանում հիմնադրվելիք 10 հակահրթիռների (հրթիռներ, որոնք պետք է ոչնչացնեն հակառակորդի արձակած հրթիռները) կայանը։

[2] Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ցուցակում բացակայում է Թուրքիայի անունը։ Սառը պատերազմի տարիներին Պենտագոնի համար Թուրքիան հանդես էր գալիս որպես ԽՍՀՄ-ի դեմ ուղղված ռազմավարության կարևոր օղակ։ ԱՄՆ ռազմական ներկայիս ստրատեգիայի համար առաջնային հանդիսացող ՀՀՊ համակարգում Թուրքիայի բացակայությունը կարող է նշանակել Վաշինգտոնի համար Անկարայի ռազմավարական նշանակության անկում։

Թեև չի կարելի ասել, թե նշված բոլոր երկրներում պետք է տեղակայվեն ԱՄՆ ՀՀՊ համակարգի տարրեր, սակայն նրանցից մի քանիսի հետ Վաշինգտոնի համագործակցությունը, փաստորեն, միտված է ամերիկյան ՀՀՊ գլոբալ համակարգի ստեղծմանը:

Դեռևս 2003թ. Մեծ Բրիտանիան ու Դանիան համաձայնեցին իրենց տարածքներում տեղակայված (Դանիայի պարագայում խոսքը Գրենլանդիայի մասին է) ՀՀՊ վաղ նախազգուշացման և հետախուզության համար նախատեսված ռադարների արդիականացմանը: Մեծ Բրիտանիայի հյուսիսային մասում գտնվող «Ֆայլինգդեյլս» *(Fylingdales)* հենակետում առկա ռադարն արդեն իսկ արդիականացված է, և այս տարի պետք է ինտեգրվի ԱՄՆ ՀՀՊ գլոբալ համակարգի մեջ: Գրենլանդիայում գտնվող «Թյուլ» *(Thule)* հենակետում առկա ռադարի արդիականացումը պետք է ավարտվի 2009թ.:

Արևմտյան մամուլում հայտնված տեղեկությունների համաձայն՝ Լոնդոնի ու Վաշինգտոնի միջև բանակցություններ են ընթանում բրիտանական կղզիներում ամերիկյան ՀՀՊ հակահրթիռների տեղակայման մասին:

Էլ ավելի ծավալային է ՀՀՊ հարցում Ճապոնիայի հետ ԱՄՆ համագործակցությունը: Ընթացքի մեջ է *PAC-3 (Patriot Advanced Capability – 3,* «Հայրենասեր առաջատար կարողություն - 3») ՀՀՊ համալիրից[1] և *Aegis* ռադարային համակարգով ու *SM-3 (Standard Missile-3,* «Ստանդարտ հրթիռ - 3») հրթիռներով զինված նավերից բաղկացած համակարգի տեղակայումը Ծագող արևի երկրում: Բանակցություններ են ընթանում Ճապոնիայում տեղակայված Միացյալ Նահանգների ՀՀՊ վաղ նախազգուշացման և հետախուզական ռադարային ցանցի ընդլայնման համար[2]: 2006թ. Վաշինգտոնն ու Տոկիոն նաև պայմանավորվածություն ձեռք բերեցին հեռահար բալիստիկ հրթիռների ոչնչացնող և 52.5 սմ տրամագիծ ունեցող SM-3 հակահրթիռի մշակման վերաբերյալ:

Չնայած Լեհաստանն ու Չեխիան դեռևս պաշտոնապես չեն թույլատրել իրենց տարածքում ամերիկյան հակահրթիռների կայանի ու ռադարի տեղակայումը, սակայն ս.թ. փետրվարի 19-ին Վարշավայում կայացած համատեղ մամլո ասուլիսի ժամանակ երկու երկրների վարչապետեր Յարոսլավ Կաչինսկին ու Միրեկ Տոպոլանեկը հայտարարեցին նման քայլ կատարելու իրենց պատրաստակամության մասին:

Պենտագոնի Հրթիռային պաշտպանության գործակալության տնօրեն, գեներալ-լեյտենանտ Հենրի Օբերինգի ներկայացմամբ՝ Լեհաստանում ու Չեխիայում ԱՄՆ ՀՀՊ համակարգի վերոհիշյալ տարրերի հիմնումը կարժենա մոտավորապես $3 մլրդ, որից $2,5 մլրդ-ը՝ Լեհաստանի բալթյան ափին 10 հակահրթիռների կայանի ստեղծմանը: Նախատեսվում է, որ արդեն 2011թ. կտեղակայվի առաջին հակահրթիռը: Ողջ կայանի հիմնումը պետք է ավարտվի 2013թ.: Խաղաղօվկիանոսյան Մարշալյան կղզիների Կվաջալեյն *(Kwajalein)* կղզում գտնվող ամերիկյան ռազմակայանից Չեխիա տեղափոխվող ռադարը պետք է գործի արդեն 2011թ.:

Ամերիկյան ու ռուսական մամուլում հայտնված տեղեկությունների համաձայն՝ չի բացառվում, որ ԱՄՆ ՀՀՊ գլոբալ համակարգի տարրեր հայտնվեն նաև Սլովակիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Մոլդովայում և Ուկրաինայում:

Մի շարք երկրների հետ ԱՄՆ-ը համագործակցում է նաև լոկալ նշանակության ՀՀՊ համակարգերի ստեղծման ուղղությամբ, որոնց նույնպես կարելի է դիտարկել ամերիկյան ՀՀՊ գլոբալ համակարգի համատեքստում:

Իսրայելի հետ Միացյալ Նահանգներն իրականացնում է ՀՀՊ *Arrow* («Նետ») համակարգի մշակումը[3], բացի այդ՝ ընթացքի մեջ են կարճ հեռահարության բալիստիկ հրթիռների դեմ պայքարի համատեղ՝ ամերիկա-իսրայելական համակարգի զարգացման աշխատանքները:

Գերմանիայի և Իտալիայի հետ ԱՄՆ-ը իրականացնում է *MEADS (Medium Extended Air Defense System,* «Միջին հեռահարության հակաօդային պաշտպանության համակարգ») անվամբ նախագիծը, որի նպատակն է կարճ ու միջին հեռահարության հրթիռների դեմ

---

[1] Հայտնի է, որ 2006թ. ամերիկյան *PAC-3* համալիրից տեղակայվեց ճապոնական հարավային Օկինավա կղզում գտնվող ԱՄՆ «Կադենա» *(Kadena)* ռազմակայանում: 2006թ. հոկտեմբերի վերջին հայտնված տեղեկությունների համաձայն՝ նախատեսվում էր այդպիսի մի համալիր տեղակայել նաև Տոկիոյի մերձակայքում:

[2] Ճապոնիայի հյուսիսային՝ Ամորի պրեֆեկտուրայում գտնվող «Սիլ» ավիաբազայում արդեն իսկ գործում է *X-Band Radar (XBR)* անվամբ ՀՀՊ վաղ նախազգուշացման և հետախուզական ռադարը:

[3] 2007թ. փետրվարի 11-ին Իսրայելը հերթական անգամ հաջող փորձարկեց ՀՀՊ *Arrow-2* համակարգը:

պաշտպանական համակարգի ստեղծումը, որը պետք է պատրաստ լինի 2014թ.: Նույն Գերմանիայի ու Նիդեռլանդների հետ ԱՄՆ-ը իրականացնում է մեկ այլ՝ *Extended Air Defense/Theater Missile Defense* («Հեռահար օդային պաշտպանություն/Ռազմական պատասխանատվության առանձին ասպարեզների հրթիռային պաշտպանություն») նախագիծը:

Միացյալ Նահանգների ՀՀՊ համակարգը

Ամերիկյան ՀՀՊ-ն կազմված է ցամաքային, ջրային, օդային ու տիեզերական բաղկացուցիչներից, որոնք փոխգործակցելով միմյանց հետ՝ պետք է համալիր կերպով ապահովեն ՀՀՊ գործառնությունը[1]:

Ցամաքային մասի հիմնական բաղկացուցիչներն են Ալյասկայում՝ Ֆորտ Գրիլի *(Fort Greely),* Կոդիակ այլենդ *(Kodiak Island)* հենակետեր, Կալիֆորնիայում՝ Վանդենբերգ *(Vanderberg)* ավիաբազա՝ տեղակայված *GBI (Ground Based Interceptor,* «Ցամաքում տեղակայված բռնիչ-կործանիչ») հակահրթիռների կայանները: Որոշ տեղեկությունների համաձայն՝ մինչև այս տարվա վերջը նշված երեք կայաններում հակահրթիռների թիվը նախատեսվում է հասցնել 25-ի, իսկ մինչև 2011թ.՝ 50-ի:

ՀՀՊ ցամաքային բաղկացուցչի տարրերն են նաև *THAAD (Theater High-Altitude Area Defense,* «Ռազմական պատասխանատվության առանձին ասպարեզների մեծ բարձրության արեայի պաշտպանություն») և *PAC-3* մարտավարական բնույթի ՀՀՊ համալիրները:

ՀՀՊ ծովային բաղկացուցիչը նախ և առաջ ներկայացնում է *Aegis* ռադարային համակարգով ու *SM-2 (Standard Missile-2), SM-3 (Standard Missile-3)* հրթիռներով զինված նավեր, որոնց ընդհանուր քանակը պետք է հասցվի 18-ի:

Ընդունված է համարել, որ ամերիկյան ՀՀՊ համակարգի ծովային բաղկացուցիչն ավելի արդյունավետ է, քանի որ ցամաքում տեղակայված հակահրթիռների փորձարկման մոտավորապես կեսն անարդյունավետ է եղել:

2007թ. փետրվարի 6-ին Պենտագոնի Հրթիռային պաշտպանության գործակալության տնօրեն Հենրի Օբերինգը հայտարարեց, թե փորձարկման է պատրաստվում լազերային համակարգով զինված *Big Crow* («Մեծ ագռավ») անվամբ ինքնաթիռը *(Boeing – 747-ի* արդիականացված տեսակը): Հաջող փորձարկման դեպքում *Airborne Laser* («Օդային լազեր») անվամբ համակարգն ի վիճակի կլինի ՀՀՊ առաջին մակարդակում ոչնչացնել ցանկացած հեռավորության վրա գտնվող հրթիռ: Բացի այդ՝ գոյություն ունի նաև *SBL (Space Based Laser,* «Տիեզերքում տեղակայված լազեր») ծրագիրը, որի նպատակն է նույն գործառույթի իրականացումն արդեն տիեզերքում:

Հակահրթիռային հարվածային միջոցներից զատ՝ ԱՄՆ ՀՀՊ համակարգը կազմված է նաև ցամաքային, ծովային, օդային ռադարային համակարգերից և հետախուզական արբանյակներից, որոնց հիմնական նպատակն է հակառակորդ հրթիռի որոշակիացումը, նրա հետագծի հստակեցումը:

2007թ. հունվարի 30-ին ամերիկյան Հրթիռային պաշտպանության գործակալության տնօրենի տեղակալ Պատրիկ Օ'Ռեյլին հայտարարեց, թե Վաշինգտոնը նախատեսում է մեկ տարվա ընթացքում լիովին վերջացնել իր ՀՀՊ համակարգի տեղակայումը: 2006թ. հունիսից, երբ տեղեկություններ հայտնվեցին Հյուսիսային Կորեայի կողմից իր *Taepodong-2* հրթիռի փորձարկման մասին (ինչն էլ տեղի ունեցավ 2006թ. հուլիսի 5-ին), ԱՄՆ ՀՀՊ համակարգը բերված է մարտական պատրաստվածության:

Նշվում է, որ ԱՄՆ ՀՀՊ համակարգի զարգացումը կրելու է էվոլյուցիոն բնույթ: Այսինքն՝ Վաշինգտոնը չի ունենա վերջնական ու քարացած ՀՀՊ համակարգ: Վերջինս պետք է անընդհատ զարգանա ու ձևափոխվի՝ ժամանակի պահանջներին համապատասխան:

2001-2006թթ. ընթացքում Բուշ-կրտսերի վարչակազմը ՀՀՊ համակարգի վրա ծախսել է ավելի քան $43 մլրդ: 2008թ. ֆինանսական տարվա (սկսվում է 2007թ. հոկտեմբերի 1-ից) համար ԱՄՆ պաշտպանական բյուջեում ՀՀՊ-ի համար նախատեսված է $8.9 մլրդ (2006թ. ֆինանսական տարվա համար նախատեսված էր $7.7 մլրդ, 2007թ.՝ $9.3 մլրդ): Բացի այդ՝ հայտնի

[1] ԱՄՆ ՀՀՊ համակարգի կայացման մասին տե՛ս *Հավելված 1:*

է, որ 2006-2012թթ. ընթացքում Պենտագոնը մտադիր է $58 մլրդ կամ իր գիտահետազոտական գործունեության բյուջեի 14%-ը ծախսել ՀՀՊ մշակումների ուղղությամբ:

Ամերիկյան ՀՀՊ համակարգի տարրերը Հարավային Կովկասում

Դեռևս 2005թ. վերջին հայտնի էր դարձել, որ Ադրբեջանի Աստարայի (Իրանի սահմանին մոտ) և Խիզայի (Բաքվից հյուսիս-արևմուտք) շրջաններում արդեն իսկ տեղակայվել են մարտավարական բնույթի ռադիոտեղորոշիչ երկու կայաններ: Տեղեկությունների մի մասի համաձայն՝ ռադարներն ամերիկյան *«Lockheed Martin»* ընկերության արտադրած *«AN/FPS-117»* տեսակի կայաններ են՝ թռչող օբյեկտները միջինը 340կմ շառավղով հայտնաբերելու ունակությամբ, իսկ մյուս մասի հավաստմամբ՝ իրականում տեղակայվել են եվրոպական *«EADS»* կորպորացիայի արտադրած *«TRML-3D»* կայաններ՝ թռչող օբյեկտներն առավելագույնը 200կմ շառավղով հայտնաբերելու ունակությամբ:

Ըստ 2006թ. հունվարին ադրբեջանական ու ռուսական ԶԼՄ հրապարակումների՝ ամերիկյան ռազմուժի Եվրոպական հրամանատարության *(USEUCOM),* որի պատասխանատվության ներքո է ընկնում նաև Հարավային Կովկասը, մասնագետներն արդիականացման նպատակով ձեռնամուխ էին եղել Ադրբեջանի Լերիկի շրջանում (սահմանակից է Իրանին) դեռևս խորհրդային ժամանակներից մնացած ռադիոտեղորոշիչ կայանի ուսումնասիրմանը: 2006թ. հունվարին, ռուսական աղբյուրների տարածած տեղեկության համաձայն, այդ նույն նպատակով ուսումնասիրվել է նաև Ադրբեջանի Աղստաֆայի շրջանում (սահմանակից է Հայաստանին) առկա ռադիոհեռախոսային հետևման կայանը:

2006թ. հունվարին ադրբեջանական մամուլում հայտնված հրապարակումների համաձայն՝ ամերիկյան ռազմական գերատեսչությունը ծրագրում էր ռադիոտեղորոշիչ երեք կայաններ հիմնել Վրաստանում ու էլ ավելի ընդլայնել Ադրբեջանում առկա կայանների քանակը:

Տարածաշրջանում ամերիկյան տեխնիկական հետախուզության ներկայությունը չի սահմանափակվում միայն վերը նշվածով: Հայտնի է առնվազն Վրաստանի օդային տարածքով իրենց թռիչքներն իրականացրած ամերիկյան հետախուզական ինքնաթիռների մասին: 2003թ. մարտին՝ իրաքյան առաջին պատերազմից առաջ, վրացական օդային տարածք երեք անգամ մուտք է գործել *U-2S* ինքնաթիռը[1], իսկ 2003թ. հուլիսի 9-ին ամերիկյան մեկ այլ հետախուզական ինքնաթիռ՝ *AWACS,* մոտ մեկ ժամ ցուցադրական թռիչք էր կատարում Թբիլիսիի վրա[2]:

Ամերիկյան աղբյուրների մատուցմամբ՝ Ադրբեջանում ԱՄՆ օժանդակությամբ արդիականացվող երեք օդանավակայաններից Սումգայիթի մոտ գտնվող «Նասոսնիում» կարող են տեղակայվել ամերիկյան հետախուզական ինքնաթիռներ՝ ենթադրաբար *AWACS* տեսակի:

Ընդհանուր առմամբ, ռուսական ու ադրբեջանական աղբյուրները նշում են, թե Պենտագոնը նպատակ ունի մինչև 2015թ. Վրաստանում ու Ադրբեջանում (չի բացառվում՝ ողջ Հարավային Կովկասում) գործածության մեջ դնել ռադիոտեղորոշիչ կայանների և էլեկտրոնային հետախուզության այլ միավորների *«Caucasus Net»* համակարգը (նմանատիպ մի համակարգ բալթյան երեք երկրներում՝ Էստոնիա, Լատվիա, Լիտվա, գործում է 2000-ից), որի բաղկացուցիչ մասն են կազմելու նաև տարածաշրջանում գործող ամերիկյան հետախուզական իքնաթիռները:

Հետևություններ և հեռանկար

Ամերիկյան ՀՀՊ համակարգի նման ծավալումը այսօր նախ և առաջ արտահայտում է վերջին տարիներին միջազգային համակարգում նկատվող լարվածության ընդհանուր աճը:

Մի շարք ցուցիչներ վկայում են, որ ռուս-ամերիկյան հակասությունները դուրս են եկել իրավիճակային նշանակության տարաձայնություններից՝ ձեռք բերելով համակարգային բնույթ, հետևաբար չեն կարող լինել կարճատև: Մյուս կողմից՝ վերջին տարիների միտումը ցույց է տալիս, որ չին-ամերիկյան հակասությունների կայուն բնույթը ժամանակի ընթացքում

---

[1] Ռուսական աղբյուրների ներկայացմամբ՝ *U-2S* ինքնաթիռը կարող է թռիչքի ժամանակ 360 աստիճան կտրվածքով հետախուզել 8 519կմ շառավղով տարածք:

[2] *AWACS-ները* կարող են թռիչքի ժամանակ 360 աստիճան կտրվածքով հետախուզել 320կմ շառավղով տարածք:

հանգեցնում է միայն լարվածության աճին Հեռավորարևելյան Ասիայում, և Հյուսիսային Կորեայի միջուկային խնդրի շուրջ վերջին տարիներին ծագած ճգնաժամը դրա վկայությունն է:

Հատկապես նման պայմաններում, երբ (այդ թվում ամերիկյան մասնագետների պնդմամբ) ԱՄՆ ՀՀՊ համակարգն առայժմ չի կարող գործել ռուսական ու չինական զանգվածային ոչնչացման զինանոցի դեմ, Վաշինգտոնը ձգտում է անել հնարավորը՝ առնվազն կարճատև ժամանակաշրջանի համար սեփական ՀՀՊ համակարգը դարձնելու դիվանագիտական արդյունավետ միջոց:

Միջազգային քաղաքականության տեսանկյունից այստեղ գործ ենք ունենալու 20-րդ դարի կեսերից ծավալված միջուկային սպառազինության տրամաբանության հետ:

Նման մոտեցումն առաջին հերթին նշանակում է, որ առաջիկա տարիներին ամերիկյան ՀՀՊ համակարգը ոչ միայն ընդլայնելու է իր աշխարհագրական սահմանները: Հետևաբար, ճիշտ են այն կանխատեսումները, որոնց համաձայն՝ Վաշինգտոնը չի սահմանափակվի Լեհաստանում ու Չեխիայում ստեղծվող ՀՀՊ համակարգի տարրերով և կձգտի ընդլայնել երկրների շարքը՝ չբացառելով հատկապես հետխորհրդային բալթյան երկրները:

Ի դեպ, արևելաեվրոպական հատվածում ամերիկյան ռազմաքաղաքական ազդեցության աճը ոչ միայն նշանակում է ճնշում Ռուսաստանի նկատմամբ, այլև պետք է ընկալել որպես եվրոպական գործընթացների նկատմամբ ԱՄՆ ազդեցության ընդլայնմանն ուղղված քայլ: Պատահական չէ, որ Լեհաստանում ու Չեխիայում ամերիկյան ՀՀՊ համակարգի բաղադրիչների տեղակայման վերաբերյալ բացասաբար արտահայտվեց Անգելա Մերկելի կառավարությունը, որը, ի տարբերություն գերմանական նախորդ՝ Գերհարդ Շրյոդերի կառավարության, իր արտաքին քաղաքականության մեջ ավելի շատ հաշվի է առնում անդրատլանտյան ուղղվածությունը:

Եթե ճիշտ են ռուսական այն գնահատականները, թե Հարավային Կովկասում տեղակայվելիք ռադարի հետախուզական հնարավորության շառավիղը կարող է կազմել 4-4.5 հազ. կմ և, հետևաբար, 2-3 հարյուր կմ-ն չի կարող ունենալ էական նշանակություն, ապա նման համալիրի տեղակայումն ավելի շատ հավանական է ԱՄՆ տեսանկյունից տարածաշրջանում իր համար առավելագույն վստահելի երկրում:

Նման տրամաբանությամբ ամենից հարմար թեկնածուն Վրաստանն է:

Մյուս կողմից՝ այս վարկածի հաստատումը կարող է լրացուցիչ փաստարկ հանդիսանալ ՆԱՏՕ-ին Վրաստանի առաջիկա անդամակցության վերաբերյալ:

Սարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

Հավելված 1

ԱՄՆ ՀՀՊ համակարգի կայացումը

Ամերիկյան աղբյուրների մատուցմամբ՝ հակահրթիռային պաշտպանության խնդիրներով Պենտագոնում սկսել են զբաղվել 1945-ից, երբ ԱՄՆ բանակի հրամանատարությունը հանդես է եկել հրթիռներից պաշտպանվելու համակարգի ստեղծման մասին առաջարկությամբ:

Միացյալ Նահանգների ՀՀՊ առաջին ծրագրի՝ *Nike Zeus (Nike* – հուն.՝ հաղթանակ, *Zeus* – անգլ.՝ Զևս) իրականացման աշխատանքները սկսվել են 1956թ.: Ծրագրի շրջանակներում իրականացվող մշակումների գաղափարը պարզ էր՝ հակահրթիռը պետք է 100կմ բարձրության վրա մոտենա թիրախ-հրթիռին և ուժեղ պայթյունի միջոցով ոչնչացնի հակառակորդ մարտագլխիկ(ներ)ը[1]: Սակայն որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ ռադիոտեղորոշիչ կայանների անկատար լինելու պատճառով խնդիր է ճիշտ հաշվարկել թռչող հրթիռի հետագիծը:

1963թ. ԱՄՆ-ում ձեռնամուխ եղան նոր ծրագրին՝ *Nike-X,* որը հիմնված լինելով իր նախորդի վրա՝ գլխավորապես կենտրոնացած էր ավելի արդիական ռադիոտեղորոշիչ կայանների ու ավելի արագ և հզոր հակահրթիռների ստեղծման ուղղությամբ:

1960-ական թթ. երկրորդ կեսին Պենտագոնում եկան այն համոզման, որ *Nike-X-ը* ի վիճակի չէ ԱՄՆ ողջ տարածքը պաշտպանել խորհրդային հրթիռներից, և 1967թ. որոշում կայացվեց նման պաշտպանություն ապահովել միայն խոշոր քաղաքների համար, որոնց պարագայում մեծ էր հավանականությունը, թե ԽՍՀՄ-ի հետ ռազմական բախման դեպքում կենթարկվեն հրթիռային հարձակման: Նոր ծրագիրը կոչվեց *Sentinel* («Ժամապահ»):

Եվս երկու տարի անց՝ 1969թ., վերանայվեց նաև *Sentinel-ը:* Որոշվեց, որ ՀՀՊ կարիք ունեն ոչ թե մեծ քաղաքները, այլ ԱՄՆ պաշտպանական համակարգի կարևորագույն հանգույցները (ինչպես, օրինակ, Սպիտակ տունը, Պենտագոնը և այլն): Հերթական ծրագիրը կոչվեց *Safeguard* («Պահպանություն»):

1972թ. մայիսի 26-ին կնքված խորհրդա-ամերիկյան հակաբալիստիկ հրթիռների համակարգերի սահմանափակման մասին պայմանագրով և 1974թ. հուլիսի 3-ին ստորագրված այդ պայմանագրին կից արձանագրությամբ, ԽՍՀՄ-ն ու ԱՄՆ-ը իրավունք ստացան պահելու առավելագույնը 100 հակահրթիռներից կազմված և աշխարհագրական կոնկրետ սահմաններ պաշտպանող հակահրթիռային մեկական համակարգեր: ԽՍՀՄ-ում այդ համակարգը պաշտպանում էր Մոսկվա քաղաքն ու նրա մերձակայքը, իսկ ԱՄՆ-ում հակահրթիռային համակարգը տեղակայվեց Հյուսիսային Դակոտա նահանգում, ուր գտնվում էր ամերիկյան բալիստիկ հրթիռների ստորգետնյա զինանոցի մեծ մասը:

Չնայած այդ պայմանագրին՝ կողմերը շարունակում էին հետազոտական-փորձարարական աշխատանքները ողջ երկրի մասշտաբով ՀՀՊ համակարգի ստեղծման ուղղությամբ: Աղմուկ հանած այդպիսի նախաձեռնություններից էր ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի կողմից 1983թ. մարտի 23-ին հայտարարված *Strategic Defense Initiative (SDI,* «Ռազմավարական պաշտպանության նախաձեռնություն») ծրագիրը, որն ավելի շատ հայտնի է «Աստղային պատերազմներ» *(Star Wars)* անվամբ[2]: Ըստ այդ ծրագրի՝ Պենտագոնը նախատեսում էր տիեզերքում տեղակայված ՀՀՊ համակարգի միջոցով հասնել մի մակարդակի, որ հնարավոր լինի ոչնչացնել հակառակորդի 3.5 հազ. հրթիռ:

Սառը պատերազմի ավարտը և, մասնավորապես, 1991թ. իրաքյան առաջին պատերազմը որոշակի փոփոխություններ մտցրին ԱՄՆ ՀՀՊ ռազմավարության մեջ: 1991թ. հունվարի 29-ին ելույթ ունենալով Կոնգրեսի զույգ պալատների առջև՝ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ-ավագը հայտարարեց ՀՀՊ նոր՝ *Global Protection Against Limited Strikes (GPALS,* «Սահմանափակ հարվածների դեմ գլոբալ պաշտպանության») ծրագրի մասին: Այն, հիմք ընդունելով նախորդ՝ *SDI* ծրագիրը, գլխավոր նպատակ պետք է ունենար Միացյալ Նահանգները պաշտպանել ոչ թե հրթիռային զանգվածային հարվածից (Սառը պատերազմի ավարտից հետո այդ սպառնալիքը տվյալ պահին համարվում էր անիրատեսական), այլ առաջին հերթին հետագայում «չարի առանցքի» մասը կազմող պետությունների՝ Հյուսիսային Կորեա, Իրան, Իրաք, Լիբիա, հրթիռային սահմանափակ զինանոցից:

---

[1] 1962թ. հուլիսին խաղաղօվկիանոսյան Կվաջալեյն *(Kwajalein)* կղզում գտնվող կայանից արձակած հակահրթիռը կարողացավ հասնել թիրախին և պայթել նրանից մոտ 2կմ հեռավորության վրա: Փորձարկումը համարվեց հաջող:

[2] 1972թ. պայմանագիրն արգելում էր ողջ երկրի մասշտաբով նախատեսված ՀՀՊ համակարգի տեղակայումը: *SDI* ծրագրի իրականացման համար Ռեյգանի վարչակազմը հիմնվեց 1972թ. պայմանագրի, այսպես կոչված, «լայն» մեկնաբանության վրա: Համաձայն ԱՄՆ նախագահ Ռեյգանի ազգային անվտանգության գծով խորհրդական Ռոբերտ Մըքֆերլանի 1985թ. հոկտեմբերի 6-ին հնչեցրած 1972թ. պայմանագրի «լայն» մեկնաբանության՝ տիեզերքում տեղակայված և ՀՀՊ շարժուն համակարգերն ու նրանց բաղկացուցիչները, որոնք հիմնված են «ֆիզիկական այլ սկզբունքների վրա» (ինչպես, օրինակ, լազերները, ջերմային շողերը և այլն) կարող են ենթարկվել մշակումների ու փորձարկումների, սակայն չեն կարող տեղակայվել: Համաձայն 1972թ. պայմանագրի «նեղ» մեկնաբանության՝ նման մշակումներն ու փորձարկումները (սակայն ոչ տեղակայումը) վերաբերում են միայն ՀՀՊ ցամաքային հստակեցված համակարգերին ու նրանց բաղկացուցիչներին:

Նախատեսվում էր, որ *GPALS-ը* պետք է բաղկացած լինի տիեզերքում տեղակայված մոտ հազար հատ հակահրթիռներից, ցամաքում տեղաբաշխված 750-1000կմ հեռահարության հակահրթիռներից, տիեզերքում գործող ու ցամաքում առկա շարժուն ռադարներից և վերջապես ռազմական պատասխանատվության առանձին ասպարեզների (աշխարհագրական շրջանների) ՀՀՊ շարժուն համակարգերից։

Թեև ԱՄՆ հաջորդ նախագահ Բիլ Քլինթոնի օրոք Վաշինգտոնը հայտարարեց իր ՀՀՊ ռազմավարության հերթական վերափոխման մասին[1], և անգամ 1993թ. Քլինթոնը հայտարարեց «Աստղային պատերազմների» դարաշրջանի ավարտի մասին, սակայն արդեն 1996թ. մարտի 6-ին Քլինթոնի վարչակազմը հրապարակեց, այսպես կոչված, *«3-plus-3»* («3 գումարած 3») ծրագիրը։ Ըստ այդ ծրագրի՝ հետագա երեք տարիներին՝ մինչև 2000թ., պետք է մշակվեին ԱՄՆ Ազգային հակահրթիռային պաշտպանության համակարգի (ԱՀՀՊ, *National Missile Defense, NMD)* հիմնական տարրերը, որոնք կարող էին հաջորդ երեք տարիներին գործի դրվել, եթե ծագեին ԱՄՆ ազգային անվտանգությանը սպառնացող համապատասխան մարտահրավերներ։

Երեք տարի անց՝ 1999թ. հուլիսի 23-ին, ԱՄՆ նախագահը ստորագրեց Կոնգրեսի ընդունած *Missile Defense Act-ը* («Հակահրթիռային պաշտպանության ակտը»), որը կոչ էր անում անմիջապես (որքան որ թույլ են տալիս տեխնոլոգիական հնարավորությունները) ձեռնամուխ լինել ԱՄՆ ԱՀՀՊ մշակմանն ու տեղակայմանը։ Այդքանով հանդերձ, 2000թ. սեպտեմբերի 6-ին ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը հայտարարեց, թե ԱՄՆ ԱՀՀՊ ստեղծման մասին որոշում կայացնելը փոխանցում է իր հաջորդին։

Միացյալ Նահանգների ներկայիս նախագահ Ջորջ Բուշ-կրտսերը 2001թ. դեկտեմբերի 13-ին հայտարարեց վեց ամիս անց՝ 2002թ. հունիսի 13-ին, 1972թ. խորհրդա-ամերիկյան պայմանագրից Վաշինգտոնի միակողմանի դուրս գալու մասին, ինչն էլ իրավական առումով ճանապարհ հարթեց ԱՄՆ-ում ԱՀՀՊ ստեղծման համար։ Նշված ժամկետի լրանալուց երկու օր անց՝ 2002թ. հունիսի 15-ին, ԱՄՆ Ալյասկա նահանգում գտնվող Ֆորտ Գրիլի *(Fort Greely)* հենակետում սկսվեցին հակահրթիռների կայանի շինարարական աշխատանքները։

[1] Առաջնային նշանակություն ստացավ մարտավարական նշանակության *Theater Missile Defense (TMD,* «Ռազմական պատասխանատվության առանձին ասպարեզների հրթիռային պաշտպանություն») համակարգերի ստեղծումը։

ՀԱՅՈՑ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԱՆԳԼԻԱ

Հայ-անգլիական առևտրատնտեսական հարաբերությունները գտնվում են երկու հարթությունում. 1) միջազգային, այսինքն՝ աշխարհի տարբեր երկրներում, 2) բուն Անգլիայում:

Միջազգային ասպարեզում հայոց վերաբերմունքն անգլիացիների նկատմամբ միանշանակ բացասական է: Հաղթելով ծովային տերություններ Իսպանիային ու Պորտուգալիային՝ Մեծ Բրիտանիան ինքը վերածվեց ծովային գերտերության և սկսեց իրականացնել էքսպանսիոնիստական քաղաքականություն: Նա հայտնվեց Արևելքի բազմաթիվ երկրներում (Հնդկաստան, Պարսկաստան, Եգիպտոս, Թուրքիա և այլն), ուր ջերմ աջակցության արժանացավ հայ վաճառականների հանրակցությունների կողմից, բայց հենց նրանք՝ որպես տնտեսական վտանգավոր մրցակիցներ, անգլիացիների ուղղակի կամ անուղղակի պարտադրանքի հետևանքով զիջեցին շուկաներն ու դուրս մղվեցին: Պատահական չէ, որ Եգիպտոսի վարչապետ Նուբար Նուբարյանը (1825-1899թթ.) Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցիչ լորդ Քրոմերիին ասել էր. «Դուք Եվրոպայի թուրքերն եք»:

Բրիտանական կղզիներն առաջին անգամ հիշատակվում են Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցում» (VIդ.): Իսկ առաջին փոխճանաչողական շփումները տեղի են ունենում խաչակրաց արշավանքների ժամանակ, երբ սպիտակ թիկնոցներին կարմիր խաչ կրող բրիտանացիները, բելգիացիների ու ֆրանսիացիների հետ մեկտեղ, յոթ անգամ ոտք են դնում Կիլիկյան Հայաստան:

1511 թվականից հայերի շնորհիվ անգլերենում հայտնվում է *carpet* բառը:

1608թ., Ջեյմս I թագավորի օրոք, *Outlands-ում* հայերը տնկում են թթենիներ և հիմնում շերամաբուծարան: 1647թ. հայ վաճառական *Բաբա Խաչատուրը* Անգլիա է բերում մի շարք ապրանքներ, այդ թվում՝ վենետիկյան ապակի ու հայելիներ: Մեկ տարի անց Ամստերդամից շուրջ երեք տասնյակ ոսկեգործներ հատում են Լա Մանշը, հաստատվում Պլիմուտում և սկսում զբաղվել իրենց արհեստով, սակայն ահաբեկվելով Կրոմվելից՝ լքում երկիրը: 1674թ. Անգլիա ճանապարհորդություն է կատարում տաղերգու *Հակոբ Գրիգորենցը* և իր հիացմունքն արտահայտում «Գովք Պրիթանիոյ» ստեղծագործությունում. դա հայոց լեզվով առաջին աշխատանքն է, որը պարունակում է անգլիացիների կենցաղի, վարքուբարքի նկարագրությունը:

1730թ. Լոնդոն այցելած իսպանացի ուղեգիր Դոն Գոնզալեսը վկայում է, որ հայոց շուկան՝ *walk-ը,* գտնվում էր արևելքից *Smittin's Street-ի* և հյուսիսից *Threadneedle Street-ի* միջև, մի կողմում ունենալով հոլանդացի ոսկերիչների, մյուս կողմում՝ պորտուգալացիների շուկան: Այս *walk-երը* գտնվում էին *Royal-Exchange-ում,* և հայերն զբաղվում էին ակնավաճառությամբ ու գորգերի առևտրով *(A Collection of Voyages and Travels, Thomas Osborne, London, 1745, vol. 1, p. 119):*

Այդուհանդերձ, այս առնչությունները դրվագային, տեղեկառու-իմացաբանական բնույթ ունեին, սակայն հենց դրանք հող նախապատրաստեցին Անգլիայում հայերի մշտական բնակություն հաստատելու համար: Եվ, բնականաբար, առաջնեկի դեր ստանձնեցին նորջուղայեցիները, որոնք Հնդկաստանում ամենասերտ շփումներ ունեին անգլիացիների հետ:

Գրիգոր Խալդարյանը, որ շուրջ երկու տասնամյակ Հնդկաստանում առևտրով էր զբաղվել, 1760թ. տեղափոխվեց Լոնդոն՝ նպատակ ունենալով հիմնել տպարան և դրա բիզնեսով ապրուստ վաստակել: Տասը տարվա ընթացքում նյութական զգալի կորուստների գնով ար-

դյունքի հասավ և նույնիսկ տպագրեց «Դաւանութիւն հաւատոյ» գիրքը։ Սակայն Լոնդոնում հայկական տպարանի արտադրանքը սպառման շուկա չուներ, և 1781թ. Գ.Խալդարյանն ստիպված սարքավորումները տեղափոխեց Պետերբուրգ։

1785թ. մադրասաբնակ *Ալեքսանդր Էդուարդի Ղարամյանը* ժամանեց Լոնդոն՝ ուսումնառության։ (Նրա հոր կտակով 1834թ. Պադուայում բացվեց Մուրատ-Ռաֆայելյան վարժարանը, որը փակվեց 1995-ին)։ 1829թ. նա նշանակվեց Լոնդոնի շերիֆ՝ կառավարության ներկայացուցիչ։ 1847թ. հուլիսի 29-ին մասնակցեց Համայնքների պալատի ընտրություններին, ստացավ 295 քվե (երկրորդ տեղն զբաղեցրածից 19-ով ավելի) և դարձավ ազգությամբ *հայ առաջին խորհրդարանականը։*

Սակայն ապագա անգլահայ գաղութի ձևավորման գործում առաջնային դերակատարություն ստանձնեցին արևմտահայերը։ XIXդ. սկզբին «Եվրոպայի հիվանդ մարդուն»՝ Թուրքիային պատկանում էր համաշխարհային ապրանքաշրջանառության ընդամենը 1%-ը։ Բրիտանական կայսրության համար Թուրքիան հանդիսանում էր «տնտեսական տարածք», որի յուրացումն անխուսափելիորեն հանգեցնելու էր գաղութացման կամ կիսագաղութացման։ XIXդ. 20-40-ական թթ. Անգլիան իր վերահսկողության տակ վերցրեց Օսմանյան կայսրության ապրանքաշրջանառության շուրջ 31%-ը։ Ամբողջ հարյուրամյակի ընթացքում Թուրքիա ներմուծված բամբակյա և մանվածքային կտորեղենի ընդհանուր արժողությունն աճեց ավելի քան 100 անգամ, իսկ բնակչության մեկ շնչի հաշվարկով՝ մոտ 50 անգամ։ Արդյունքը եղավ այն, որ տեղական սպառման շուկայում ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը 4-5%-ից հասավ 80-ի։ 40-ական թթ. սկզբից մինչև 1870-1872թթ. եվրոպական (և, առաջին հերթին, անգլիական) բամբակյա արտադրանքի մասնաբաժինը թուրքական շուկայում 30-ից հասավ 80%-ի։

Բրիտանական տնտեսական էքսպանսիայի իրականացման գործում զգալի էր հայերի դերը, և դա ուներ իր շարժառիթները։ Նախ, ռազմաֆեոդալական Թուրքիայում հայոց կապիտալը գործում էր մշտակա սպառնալիքների ներքո՝ սեփականության բռնազավթումները, կեղեքումները, կամայականությունները սովորական երևույթ էին։ Սա էր պատճառը, որ հայերը ֆինանսական ներդրումներ էին կատարում ոչ թե արտադրության, այլ առևտրի, վարձակալական, միջնորդական, վաշխառուական գործարքների մեջ։ Անգլիայի տնտեսական ներխուժումը Թուրքիա միանգամայն ձեռնտու էր հայոց կապիտալին, քանզի հնարավորություն էր ընձեռում ներդրվելու նոր շուկաներում, բիզնեսի նոր ոլորտներում։

Երկրորդ, Թուրքիայի թե՛ ներքին, թե՛ արտաքին առևտրի մեծ մասը գտնվում էր հայոց ձեռքում, և բնական է, որ անգլիացիներն առաջին հերթին գործ պիտի ունենային հայերի հետ։ Տեղի ունեցավ կապիտալների փոխներթափանցում, «ուծացում», սակայն տնտեսականորեն, արտաքնապես «անգլացվելուն» զուգընթաց հայոց կապիտալը չկորցրեց իր ամենաարժեքավոր հատկանիշը՝ ազգային բնույթը։

1835թ. Անգլիայի տեքստիլ արդյունաբերության «մայրաքաղաք» Մանչեսթր ոտք դրեցին պոլսեցի մանուֆակտուրավաճառներ *Գրիգոր, Հարություն և Հովհաննես Միրասելիդյան* եղբայրները, որոնք էլ դարձան անգլահայ կայուն առևտրատնտեսական համայնքի հիմնադիրները։ Նրանց հետևեցին տիվրիկցի *Մանուկ, Հարություն, Գևորգ և Խաչիկ Գաբամաճյան* եղբայրները, որոնց մանուֆակտուրայի ու երկաթե իրերի առևտրական տունը մեծ հեղինակություն ձեռք բերեց անգլիական ֆիրմաների, ֆաբրիկաների, գործարանների շրջանում և առևտրական լայն ու բազմակողմանի գործառնություններով ակնառու դիրք գրավեց Թուրքիայի ասիական ու եվրոպական մասերում։

Հարություն Մուշլյանն առաջինն էր, որ ամուսնացավ անգլուհու հետ, սակայն հայկական եկեղեցի կառուցելու համար հողատարածք գնեց *Upper Brook* փողոցում։

1840-ից հիմնված մանուֆակտուրայի ու երկաթեղենի հայկական առևտրական տներից մի քանիսն ունեցան երկարատև կյանք. այսպես, Հովհ. Հակոբյանի ֆիրման գործեց 35 տարի, Մարտիրոս Թոքատյանինը՝ 40, իսկ Կարապետ Եղիազարյանինը՝ 45 տարի։

Անգլիական բիզնեսն ուներ, թերևս, միայն իրեն բնորոշ առանձնահատկություն. հետամնաց Թուրքիայից եկած հայ վաճառականներն արագ ըմբռնեցին, որ բնատուր ձեռներեցությունից, առևտրական տաղանդից զատ՝ այստեղ խիստ հարգի էին հիմնարար գիտելիքներն ու բարձր կրթվածությունը: Դա էր պատճառը, որ բիզնեսին զուգընթաց՝ Կարապետ Կարագյոզյանը դասավանդում էր Քոլրիջի Սթյուարտ Միլ համալսարանում, Մ.Թոքատյանը Կոնտիում ուսումնասիրում էր փիլիսոփայություն, ֆրանսիական, անգլիական, գերմանական գրականություն, իսկ Գարեգին Փափազյանը Շեքսպիր էր թարգմանում:

Առաջին սերնդին հետևում է 50-60-ական թթ. ալիքը, որը հաստատվելով Անգլիայում՝ տնտեսական սերտ կապեր էր պահպանում Կ.Պոլսի ու գավառների հետ: Մեկ տասնյակի չափ նորահաստատ հայ վաճառականներ Թուրքիա էին արտահանում անգլիական ապրանքներ, իսկ այնտեղից ներկրում թուրքական, պարսկական, կովկասյան տնայնագործական ու բնամթերային արտադրանք:

1862թ. ամբողջ անգլահայ համայնքը, որ զուտ առևտրատնտեսական մի հանրակցություն էր, բաղկացած էր Մանչեսթրում ու Լիվերպուլում բնակվող 30 վաճառականներից ու նրանց ընտանիքների անդամներից: Տնտեսապես փայլուն դիրքի հասած այս մարդիկ, բնականաբար, պիտի հոգ տանեին ազգային ինքնակազմակերպման մասին: Արդեն 1866-ին Մանչեսթրի, Լոնդոնի ու Լիվերպուլի հայերը գումարեցին Ընդհանուր ժողով ու ձևավորեցին հոգաբարձություն, որը ձեռնամուխ եղավ համայնքի ներքին կանոնագրքի ստեղծմանը և Մանչեսթրում եկեղեցի կառուցելու համար հանգանակություն կազմակերպելուն: Ուշագրավ է, որ կանոնագրքի ստեղծմանն ու վավերացմանը մասնակցեց 14 վաճառական, այդ թվում՝ ապագա «նավթարքա», 24-ամյա *Ալեքսանդր Մանթաշյանցը:*

1870թ. հանգանակվեց 3010 ֆունտ, 10 շիլինգ և 11 փենս, որով Մանչեսթրի *Upper Brook* փողոցում կառուցվեց Սբ Երրորդություն հայոց եկեղեցին:

1875-1890թթ. միայն Մանչեսթրում կար 75-80 հայապատկան առևտրական տուն, որոնք 25 մասնաճյուղեր ունեին Պոլսում ու Զմյուռնիայում:

Համիդյան ջարդերին համայնքն արագ արձագանքեց. ստեղծվեցին մի շարք հանձնախմբեր (սովելոց, գաղթականաց, որբախնամ), և հանգանակվեցին գումարներ՝ հոգուտ աղետյալ ազգակիցների:

XIXդ. վերջին-XXդ. սկզբին Լոնդոնում բնակություն հաստատած փոքրաթիվ արևմտահայերին, Հնդկաստանից ու Հնդկաչինի երկրներից տեղափոխված պարսկահայերին ավելացան կովկասահայերը: Դրդապատճառն այն էր, որ անգլիական կապիտալը ներխուժեց Կովկասի արդյունաբերություն ու հատկապես Բաքվի նավթարդյունաբերություն, և հայ կապիտալիստներն իրենց բիզնեսը վաճառեցին անգլիացիներին (նավթարդյունաբերողներ Առաքել Ծատուրյան, Գևորգ Քալանթարյան, Հովհ. Թումայան, «Գ.Ա. Առափելյան և ընկ.», «Բուդաղյան եղբայրներ», «Հակոբ և Հովակիմ Ադամյան եղբայրներ»: 1899թ. Զանգեզուրի իրենց պղնձահալ գործարաններն ու հանքերը վաճառեցին Ալ. Մելիք-Ազարյանցն ու Մութաֆյան եղբայրները, ինչի արդյունքում ստեղծվեց *Anglo-Russian copper Mining Syndicate, Ltd-ն):* Տնտեսական այս խոշորածավալ գործարքի հետևանքով ֆիրմաների նախկին տերերից, նրանց հարազատներից ու բարեկամներից շատերը տեղափոխվեցին Անգլիա:

1910-ական թթ. Մանչեսթրում բնակվում էր 650 հայ, Սաֆբորդում՝ 150, Լիվերպուլում՝ 20, Լոնդոնում՝ 400 հոգի: Այս տարաբնույթ զանգվածը կարելի է բաժանել երեք խմբի. 1.*արևմտահայեր* (պոլսեցիներ, զմյուռնիացիներ, թալասցիներ, խարբերդցիներ, եգիպտոսցիներ, վանեցիներ և այլք), 2. *պարսկահայեր* (նորջուղայեցիներ, թեհրանցիներ, թավրիզցիներ և այլք), 3. *արևելահայեր* (երևանցիներ, ղարաբաղցիներ, թիֆլիսցիներ, բաքվեցիներ և այլք): Սույն խմբերն ունեին հոգեբանական, մտածելակերպային էական տարբերություններ, զանազան իրողությունների կրողներ էին, սակայն միավորիչը նյութական ապահով վիճակում և ունեցվածքային գրեթե նույն հարթության վրա գտնվելն էր:

Առաջին աշխարհամարտի ժամանակ, մեծ ջանքերի գնով, անգլիական կառավարությունը թրքահպատակ հայերին թշնամի չճանաչեց և համայնքի լիազորներ նշանակեց՝ Լոնդոնի համար հնդկահայ գնդապետ *Գրեգորիին*, Մանչեսթրի համար՝ մասոն, Ազատ որմնադիրների օթյակի բարձրաստիճան անդամ *Հովհ. Գամպերյանին*։

Ցեղասպանության ժամանակ փոքրաթիվ անգլահայ համայնքը բողոքի հզոր ալիք բարձրացրեց, կազմակերպեց բազմաթիվ հանրահավաքներ, քարոզչական միջոցառումներ և ընդհանուր առմամբ ժողովեց ավելի քան 155 հազ. ֆունտ ստերլինգ՝ ազգային կարիքների համար։

1920-ական թթ. համայնքի համար սկսվեց նոր՝ վերապրումի փուլ։ Նավթաբիզնեսի ներկայացուցիչների, գորգի ու մորթի-մուշտակեղենի վաճառականների ազգականների ու մտերիմների ներգաղթի հետևանքով անգլահայերի թիվը հասավ 2000-ի, ընդ որում, լոնդոնաբնակներինը՝ 800-ի։

1922թ. համաշխարհային նավթաբիզնեսի ականավոր գործիչ Գալուստ Գյուլբենկյանը 21.500 ֆունտ ստերլինգ գումարով կառուցեց Լոնդոնի Սբ Սարգիս հայոց եկեղեցին։

Խաչատուր Դաղայան
«Նորավանք» հիմնադրամ